

Յեւսիսկյան Քաղաքացիական Ասամբլեայի  
Վանաձորի գրասենյակ



ԸՄԴԱ-ների  
Հանձնարարականների  
իրականացումը Հայաստանում  
2003-2013թթ.

Գնահատման զեկուլյց



Վանաձոր  
2015թ.

Յեղիևակային խումբ

Արթուր Սաքունց

Վարդինե Գրիգորյան

Անուշ Համբարյան

*Ծրագիրն իրականացվել է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից, Եվրոպական Հանձնաժողովի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Արևելյան գործընկերության երկրներում ԾՊ քարոզարշավների ԺԵՊ աջակցություն» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Պրոմո-ԼԵՔՍ ասոցիացիայի կողմից: Ձեկույցում արտահայտված կարծիքները մասնակիցներին են և կարող են չարտացոլել ֆինանսավորող կողմերի կարծիքները:*

**Promo - LEX**

*Advancing democracy and human rights*



# Բովանդակություն

Ներածություն.....	5
Հապավումներ.....	6
Մեթոդաբանություն.....	7
Ընտրությունները և օրենսդրական դաշտը Հայաստանի Հանրապետությունում.....	8
ԸՄԴ-ի հանձնարարականների և դրանց իրականացման ամփոփումը.....	29
Եզրակացություն և առաջարկություններ.....	37
Հավելված. ԸՄԴ հանձնարարականների մատրիցա.....	39
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի մասին.....	65



# Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում առաջին նախագահական ընտրությունները տեղի են ունեցել 1991թ.-ի հոկտեմբերին՝ հաջորդելով 1991թ.-ի սեպտեմբերին կայացած անկախության հանրաքվեին: Այդ պահից ի վեր Հայաստանում անցկացվել են մի շարք խորհրդարանական, նախագահական, տեղական ինքնակառավարման ընտրություններ և հանրաքվեներ:

Չնայած իրականացվող բարեփոխումներին և ընտրական օրենսդրության շարունակական կատարելագործմանը, ընտրական համակարգի հանդեպ հանրային վստահությունը Հայաստանում նվազում է: Ըստ Կովկասյան Բարոմետրի տվյալների, 2013թ.-ին հայ հարցվողների միայն 9%-ն է համոզված եղել, որ վերջին համապետական ընտրությունները լիովին արդար<sup>1</sup> են եղել, մինչդեռ 2011թ.-ին հարցվածների 12%-ն է այդպես<sup>2</sup> կարծել: Հայաստանում ընտրությունների իրավականության հանդեպ ընդհանուր թերահավատությունը բխում է որոշակի բացասական երևույթներից, ներառյալ.

- Ընտրակաշառք և ընտրողների հանդեպ ճնշումներ
- Ընտրացուցակների և քվեարկության արդյունքների կեղծում
- Վարչական ռեսուրսների չարաշահում, ներառյալ աշխատանքային ժամերին պետական հիմնարկներում քարոզարշավների իրականացում և նույն գործողության իրականացման արգելք ընդդիմադիր թեկնածուների համար, այդ հիմնարկների աշխատողների հարկադիր մասնակցություն իշխանական թեկնածուի հավաքներին և ընդդիմադիր ուժերի հավաքներին նրանց մասնակցության սահմանափակում
- Քարոզարշավների ֆինանսավորման անարդյունավետ կարգավորում և անազնիվ պայքար
- Դիմումների և բողոքների անարդյունավետ քննություն
- Լրատվական անհամաչափ լուսաբանում և բազմակարծության պակաս:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի և այլ տեղական կազմակերպությունների կողմից իրականացված ընտրությունների դիտորդությունները ցույց են տալիս, որ չնայած ընտրական օրենսդրության և իրավական պրակտիկայում որոշակի բարելավումներ են եղել, խախտումները ևս զուգահեռաբար կատարելագործվել են:

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները (ԸՄԴԱ) կարևորագույն դեր են ունեցել ընտրական բարեփոխումների խթանման գործում, հատկապես ընտրական օրենսդրության բարեփոխման մեջ, այնուամենայնիվ դեռևս անհրաժեշտություն կա ամբողջական վերլուծություն կատարել՝ պարզելու, թե ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների կողմից ներկայացված հանձնարարականները, որքանով են եական և որքանով են իրականացվում:

Տվյալ հետազոտությունը նպատակ ունի ուսումնասիրել ընտրական օրենսդրության և վարչարարության զարգացումը Հայաստանում ԸՄԴԱ-ի հանձնարարականների լույսի ներքո՝ փորձելով բացահայտել, թե որքանով են առաքելությունները արդյունավետ Հայաստանի Հանրապետությունում ընտրությունները ժողովրդավարական չափանիշներին համապատասխանեցնելու գործում:

<sup>1</sup>Կովկասյան բարոմետր (ԿԲ) Հարավկովկասյան երկրներում քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացումների հանրային ընկալումը 2013 թ. ՀՌԿԿ-Հայաստան, 2014 թ. ապրիլ [http://www.crrc.am/hosting/file/\\_static\\_content/barometer/2013/CB%202013\\_Public%20Presentation\\_Armenian.pdf](http://www.crrc.am/hosting/file/_static_content/barometer/2013/CB%202013_Public%20Presentation_Armenian.pdf)

<sup>2</sup>Կովկասյան բարոմետր (ԿԲ) Հարավկովկասյան երկրներում քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացումների հանրային ընկալումը 2013 թ. ՀՌԿԿ-Հայաստան, 2012 թ; սեպտեմբեր, [http://www.crrc.am/hosting/file/\\_static\\_content/barometer/2011/CRRC\\_CB\\_2011\\_Arm.pdf](http://www.crrc.am/hosting/file/_static_content/barometer/2011/CRRC_CB_2011_Arm.pdf)

## Հապավումներ

ԿԸՀ – Կենտրոնական ընտրական հանձնաժողով

ԱՊՀ – Անկախ պետությունների համագործակցություն

ԵԽ – Եվրոպայի խորհուրդ

ԵԽ-Ն – Եվրոպական խորհրդարան

ԸՄԴԱ – Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն

ԸՀՄՀ – Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամ

ՏԻՄ – Տեղական ինքնակառավարման մարմիններ

ՀՈԱՀ – Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով

ԺՄԻԳ – Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ

ԵԱՀԿ – Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն

ԵԽԽՎ – Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով

ՏԸՀ – Տեղամասային ընտրական հանձնաժողով

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՄԸՀ – Մարզային ընտրական հանձնաժողով

ԸԸՀ – Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով

ՄԱԶԳ – ՄԱԿ-ի Չարգացման ծրագիր

# Մեթոդաբանություն

Սույն ծրագրի նպատակն էր ուսումնասիրել 2003թ.-ից ի վեր ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների, մասնավորապես ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ, ԵԽՏՎ, ԵԽ-ՆԻ և այլ կառույցների հանձնարարականներն ու դիտարկումները՝ վերլուծելով նրանց դերը ընտրական բարեփոխումներում և այդ փոփոխությունների ազդեցությունը հետագա ընտրությունների արդյունքների վրա: Ի սկզբանե զեկույցը նպատակ ուներ անդրադառնալ նաև ԸՄԴ-ի այլ կառույցների հանձնարարականներին, սակայն դրանց մեծամասնությունը պարզապես հղում էին կատարում ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի հանձնարարականներին: ԱԳՅ դիտորդական առաքելությունները սովորաբար Յայաստանի ընտրություններին վերագրում են գերազույն ժողովրդավարական գնահատականներ և առանձնապես արժեքավոր ներդրում չեն ունեցել բարեփոխումների տեսակետից: 2003-2013 ժամանակահատվածի ընտրության համար հիմք են հանդիսացել երկու համապարփակ ընտրական օրենսգրքերի կիրառման ժամկետները. 1999թ.-ի Ընտրական օրենսգիրքը (մինչև 2003թ. ընտրական հանձնաժողովները ենթադրաբար բավարար ժամանակ ունեին ընտրությունների վարչարարության կարգավորումներին ավելի լավ տիրապետելու համար) և գործող Ընտրական օրենսգիրքը, որն ընդունվել է 2011թ.-ին: Բացի ընտրական բարեփոխումների գնահատմանը նպաստելուց, ծրագիրը նպատակ ունի նաև ներդրում ունենալ միջազգային դիտորդական առաքելությունների արդյունավետության բարձրացման գործում:

ԸՄԴ-ի հանձնարարականները գնահատվել են ըստ հետևյալ չափանիշների՝

- Կոնկրետ
- Արդիական
- Իրականացված
- Արդյունավետ
- Կրկնվող

Հանձնարարականները և դրանց իրականացման արդյունավետությունը գնահատվել է տեղական կազմակերպությունների կողմից իրականացված դիտորդությունների արդյունքների և օրենսդրական վերլուծության հիման վրա: Չափանիշներին համապատասխանող դրական պատասխանները իրականացման արդյունակում տարբերակված են 1 նշանով, իսկ բացասական պատասխանները՝ 0-ով:

ՀԶԱ Վանաձորի գրասենյակը դիտարկել է նաև ՀՀ կառավարության և խորհրդարանականների՝ 2003թ.-ից ի վեր ներկայացված օրենսդրական նախաձեռնությունները, պարզելու՝ արդյոք դրանք արտացոլում կամ անդրադառնում են ԸՄԴ-ի հանձնարարականներին, որ կուսակցություններն են դրանք առաջադրել և որոնք են դրանց ընդունման կամ մերժման միտումները: Պարզվել է, որ ընդամենը մի քանի օրենսդրական նախաձեռնություններ են հղում կատարել ԸՄԴ-ի հանձնարարականներին: Վերլուծության այդ մասը կներկայացվի առանձին զեկույցով:

Վենետիկի հանձնաժողովը բավականին հետևողական է գտնվել ընտրական օրենսդրության մեջ իր ներկայացրած հանձնարարականների ընդգրկման գործընթացի գնահատման հարցում: Ուստի հանձնաժողովի ներկայացրած յուրաքանչյուր հանձնարարականի վերլուծության փոխարեն զեկույցը Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականներին անդրադառնում է միայն այնքանով, որքանով դրանց հղում է կատարվել ԸՄԴ-ի կողմից:

# Ընտրությունները և օրենսդրական դաշտը Հայաստանի Հանրապետությունում

Իր անկախության 24 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունն անց է կացրել 6 նախագահական, 5 խորհրդարանական ընտրություններ, 3 հանրաքվե, ինչպես նաև բազմաթիվ տեղական ինքնակառավարման և լրացուցիչ ընտրություններ: 1990թ.-ին ընտրված Գերագույն խորհուրդը գործել է մինչև 1995թ.-ի Ազգային ժողովի առաջին ընտրությունները:

**1990թ. Գերագույն խորհրդի ընտրություններ.** Գերագույն խորհուրդն ընտրվել է մեծամասնական կարգով՝ մայիսի 20-ին և հունիսի 3-ին տեղի ունեցած երկփուլ ընտրությունների միջոցով: Այն ուներ 260 անդամ, ովքեր ի սկզբանե ներկայացնում էին Կոմունիստական կուսակցությունը և Հայոց համագգային շարժումը, իսկ ավելի ուշ դրանք բաժանվեցին մի քանի խմբակցությունների: Առաջին նիստի ժամանակ խորհուրդն ընդունեց Հայաստանի Անկախության հռչակագիրը: Հայաստանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն: Անկախության հանրաքվեն անցկացվեց 1991թ.-ի սեպտեմբերի 21-ին:

**1991թ. նախագահական ընտրություններ.** Անկախ Հայաստանի առաջին նախագահական ընտրությունները կայացան 1991թ.-ի հոկտեմբերի 16-ին: Հավաքելով ձայների 83%-ը՝ Լևոն Տեր-Պետրոսյանն ընտրվեց Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ: Առաջին նախագահական ընտրությունները տեղի ունեցան համաձայն 1991թ. Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունների մասին ՀՀ օրենքի:

Օրենքը հակիրճ փաստաթուղթ էր՝ բաղկացած 24 հոդվածներից, որոնք կարգավորում էին նախագահի ընտրության հիմունքները, ընտրական իրավունքը, հանձնաժողովների կողմից ընտրության կազմակերպումը, ընտրության նախապատրաստման և անցկացման հրապարակայնությունը, թեկնածուների գրանցումը, նյութական ռեսուրսների ապահովումը, ընտրախախտումների համար պատասխանատվությունը, ընտրության ժամկետները, վստահված անձանց գործունեությունը, ընտրացուցակները, քվեաթերթիկների կարգավորումները, հաշվարկի ընթացակարգերը և արդյունքների հրապարակումը: Համաձայն այդ օրենքի՝ ընտրությունների վարչարարությունը գործող հանձնաժողովների կողմից իրականացվում էր 3 մակարդակներում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, շրջանային կամ քաղաքային հանձնաժողով և տեղամասային հանձնաժողով: Հանձնաժողովներից և ոչ մեկը չէր գործում մշտական հիմունքներով: Օրենքը չէր նախատեսում դիտորդական առաքելության իրականացում: Չնայած օրենքը նախատեսում էր թեկնածուների 10 տարվա բնակություն, այն չէր պահանջում որևէ ապացուցող փաստաթղթի տրամադրում թեկնածուների գրանցման համար: Ըստ օրենքի՝ յուրաքանչյուր թեկնածու կարող էր գրանցել առավելագույնը 50 վստահված անձ, ովքեր պետք է գրանցված լինեին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից: Օրենքը չէր նախատեսում նախընտրական քարոզարշավները և դրանց ֆինանսավորումը կարգավորող դրույթներ, սակայն ԿԸՀ-ից պահանջում էր իր միջոցներով թեկնածուի վերաբերյալ ընտրողներին տեղեկատվություն տրամադրել: Քվեարկության ընթացակարգը բարդ գործընթաց էր, որը պահանջում էր, որ ընտրողներն իրենց ընտրության իրավունքը հաստատող վկայական ունենային:

Քվեաթերթիկի վրա յուրաքանչյուր թեկնածուի անվան դիմաց գրված էր «համաձայն եմ» բառակապակցությունը (ինչպես նաև «համաձայն չեմ» բառակապակցությունը այն դեպքերում, երբ թեկնածուն մեկն էր), և քվեարկողներից պահանջվում էր ջնջել այն թեկնածուի անունը, ում չէին ընտրում և թողնել միայն նախընտրած թեկնածուի անունը: Հաղթող էր համարվում այն թեկնածուն, ով ամենաշատ ձայն էր ստանում, կամ ում օգտին քվեարկած



ձայներն ավելի շատ էին, քան դեմ քվեարկած ձայները: Օրենքը չէր հստակեցնում թեկնածուի համար տրվող ձայների նվազագույն տոկոս, մինևույն ժամանակ, ընտրությունները կունենային երկրորդ փուլ, եթե թեկնածուներից ոչ մեկը «բավարար» ձայն չհավաքեր:

Չնայած առաջին նախագահական ընտրությունները կարգավորող օրենքի անհստակություններին՝ այս ընտրությունները ավանդաբար համարվում են միակ արդար ընտրությունները Հայաստանի Հանրապետության պատմության մեջ: Այնուամենայնիվ, ըստ հայալեզու աղբյուրների<sup>3</sup>, նախագահական առաջին ընտրությունների ժամանակ քվեարկել է 1 518 090 մարդ, մինչդեռ անգլալեզու աղբյուրների<sup>4</sup> հավաստմամբ այդ թիվը եղել է 1 286 464, որը կազմում է ընտրողների 70%-ը և ամբողջ բնակչության միայն 35.3 %:

**1995թ. խորհրդարանական ընտրություններ.** Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առաջին ընտրությունները տեղի ունեցան 1995թ.-ի հուլիսի 5-ին՝ Հայաստանի սահմանադրության ընդունման հանրաքվեին զուգահեռ: Ընտրությունները կարգավորվում էին ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին ՀՀ օրենքով, որն ընդունվել էր 1995թ.-ի ապրիլին: Ազգային ժողովը կազմված էր 190 պատգամավորներից, որոնցից 150-ն ընտրվել էին մեծամասնական կարգով, իսկ 40-ը՝ համամասնական: Նոր օրենքը ընտրական իրավունք էր սահմանում մինչև ընտրությունների օրը 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների համար, ովքեր մինչև ընտրությունների օրը առնվազն մեկ տարի բնակվել էին Հայաստանի Հանրապետությունում: Ընտրության իրավունք չէր տրվում հոգեկան հիվանդության պատճառով անգործունակ ճանաչված քաղաքացիներին, դատապարտյալներին, քրեական հանցագործության համար հետախուզվողներին, ինչպես նաև կալանքի տակ գտնվող այն անձանց, ում քվեարկության իրավունքը չէր հաստատվել գերագույն դատարանի կամ ԿԸՀ-ի կողմից: Մինևույն ժամանակ կալանավորները կարող էին գրանցվել որպես թեկնածու և իրենց իրավունքները կարող էին ներկայացնել վստահված անձանց միջոցով:

Օրենքը նախատեսում էր քարոզարշավի համար անձնական կամ նվիրաբերված գումարների օգտագործում, սակայն այն ԿԸՀ-ից պահանջում էր տրամադրել հիմնական տեղեկատվություն թեկնածուների և նրանց նախընտրական ծրագրերի վերաբերյալ, ինչպես նաև բոլոր թեկնածուների և կուսակցությունների համար հավասարաչափ անվճար եթերաժամ ապահովել՝ օգտագործելով ԿԸՀ-ի տնօրինության ներքո գտնվող միասնական ընտրական հիմնադրամի միջոցները: Օրենքը չէր սահմանում, թե ինչպես և որտեղ պետք է հավաքվեին և օգտագործվեին անհատական նվիրատվությունները, սակայն այն սահմանում էր թույլատրելի առավելագույն գումար և պարտադրում էր, որ թեկնածուները հայտարարագրեին իրենց ծախսերը:

Օրենքը գրանցված դիտորդներին թույլ էր տալիս դիտորդական առաքելություն իրականացնել ընտրության ընթացքում, բայց չէր հստակեցնում դիտորդների գրանցման պահանջներն ու գործընթացը: Ի տարբերություն գործող Ընտրական օրենսգրքի՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին ՀՀ Օրենքը ընտրական հանձնաժողովներում հավասար ներկայացուցչություն էր սահմանում մրցակցող բոլոր կուսակցությունների համար: Տեղամասային և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների բոլոր որոշումները կարող էին բողոքարկվել ԿԸՀ-ին թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների կամ քաղաքացիների կողմից՝ երեք օրվա ընթացքում:

ԿԸՀ-ի որոշումները կարող էին բողոքարկվել դատարանում թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների և քաղաքացիների կողմից՝ եռօրյա ժամանակահատվածում: Թեկնածուն

<sup>3</sup> ՀՀ նախագահական ընտրություններ. հետադարձ հայացք, Յոթ օր օրաթերթ, 2013 թ. հունվարի 27, <http://www.7or.am/am/news/view/46011/>

<sup>4</sup> Elections in Asia and the Pacific: A Data Handbook : Volume I: Middle East, Central Asia, and South Asia: Volume I: Middle East, Central Asia, and South Asia, Dieter Nohlen, Florian Grotz, and Christof Hartmann, 2001

պարտավոր էր գրանցման համար վճարել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով ընտրական գրավ և ներկայացնել առնվազն 10000 ստորագրություն: Ազգային ժողովում ընտրված պատգամավորները ձևավորեցին «Յանտրապետություն» խմբակցությունը՝ 117 պատգամավոր, «Շամիրամ» խմբակցությունը՝ 8 պատգամավոր, Յայաստանի կոմունիստական կուսակցությունը՝ 6 պատգամավոր, Ազգային ժողովրդավարական միությունը՝ 5 պատգամավոր, Ազգային ինքնորոշում միավորումը՝ 3 պատգամավոր, «Բարեփոխումներ» պատգամավորական խումբը՝ 30 պատգամավոր, և 21 պատգամավոր ոչ մի խմբակցության կամ խմբի չմիացավ:

**1996թ. նախագահական ընտրություններ.** Երկրորդ նախագահական ընտրություններն անցկացվեցին 1996թ.-ի սեպտեմբերի 22-ին: Ընտրությունները կարգավորվում էին 1996թ.-ի ապրիլին ընդունված Յանտրապետության նախագահի ընտրության մասին ՀՀ օրենքով: Նոր օրենքն ուներ 49 հոդված, որոնք մանրամասն նկարագրում էին ընտրական գործընթացները: Ավելին, ընտրական համակարգի վերաբերյալ դրույթները հստակեցնում էին նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման հնարավորությունների ստեղծման և օգտագործման ընթացքը, նաև այնպիսի գործընթացներ, ինչպիսիք են թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ ստորագրությունների ստուգումը, թեկնածուի գրանցման չեղարկումը, նախընտրական քարոզարշավը, ընտրացուցակների հրապարակումը և ստուգումը, ընտրական հանձնաժողովի կողմից փաստաթղթերի հանձնումը, համայնքային ընտրական հանձնաժողովների կողմից կտրոնների հաշվարկը, մարզային ընտրական հանձնաժողովների կողմից արդյունքների ամփոփումը, ԿԸՀ որոշման հրապարակումը, հերթական կամ արտահերթ նախագահական ընտրությունների կազմակերպումը: Նոր օրենքը նախատեսում էր նախագահական ընտրությունների կազմակերպում 4 մակարդակներում գործող ընտրական հանձնաժողովների կողմից՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, մարզային ընտրական հանձնաժողով, համայնքային ընտրական հանձնաժողով և տեղամասային ընտրական հանձնաժողով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմված էր 20 անդամից, որոնք նշանակվում էին Ազգային ժողովում ներկայացված կուսակցությունների կողմից: Օրենքը ՀՀ քաղաքացիներին թույլ էր տալիս քվեարկել Յայաստանի՝ արտասահմանում գտնվող դիվանագիտական առաքելություններում: Ի դեպ, ԸՄԴ-ի կողմից առաջարկվել էր սույն դրույթը ավելացնել գործող Ընտրական օրենսգրքում ևս: Մինևույն ժամանակ, նոր օրենքը կալանավորներին զրկում էր քվեարկելու կամ թեկնածություն դնելու հնարավորությունից: Այսպիսով, իր թեկնածությունն առաջադրել ցանկացող կալանավորը պետք է դիմեր ԿԸՀ-ին, որն էլ իր հերթին պետք է դիմեր Գերագույն դատարան՝ վերանայելու խափանման միջոցը:

Օրենքը սահմանում էր ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից նվիրաբերվող առավելագույն գումարի չափը, սակայն չէր սահմանափակում նախընտրական ծախսերի առավելագույն չափը: Օրենքը տեղական դիտորդական առաքելություն չէր նախատեսում, սակայն միջազգային դիտորդերին թույլ էր տալիս մասնակցել բոլոր հանձնաժողովների հանդիպումներին և ընտրական գործընթացներին, ինչպես նաև թույլ էր տալիս ստանալ արձանագրությունների պատճենները: Քաղաքացիական նախաձեռնությունների և քաղաքական կուսակցությունների կողմից թեկնածուների առաջադրման համար պահանջվում էր քաղաքացիների 1000 ստորագրության ներկայացում: Թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ էր ներկայացնել առնվազն 25 000 ստորագրություն, ինչպես նաև 2 միլիոն ՀՀ դրամի չափով (4960 ԱՄՆ դոլար) ընտրական գրավ: Ըստ Յայաստանի Հարապետության ազգային վիճակագրության ծառայության տվյալների՝ այդ ժամանակ միջին աշխատավարձը 9469 ՀՀ դրամ (23 ԱՄՆ դոլար)<sup>5</sup> էր:

<sup>5</sup> Աշխատավարձ, աշխատուժի գին, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, [http://www.armstat.am/file/article/trud\\_09\\_5.pdf](http://www.armstat.am/file/article/trud_09_5.pdf)

Յետաքրքիր է, որ թեկնածուի գրանցումը կարող էր մերժվել հետևյալ դեպքերում. 1) թեկնածուի առաջադրումը պաշտպանելու պաշտոնաթերթիկներում սույն օրենքի 16 հոդվածով սահմանված կարգով ստուգման հետևանքով վավերական ստորագրությունների թիվը պակաս է 25 հազարից, 2) գրանցման համար ներկայացված փաստաթղթերում հայտնաբերվել են ակնհայտ կեղծիքներ, 3) թեկնածուի վրա տարածվում են սահմանադրությամբ նախատեսված սահմանափակումները: Այնուամենայնիվ, գրանցման մերժումը որոշվում էր ԿԸՅ-ի 2/3-ի կողմից:

Օրենքը թույլ էր տալիս գրանցել մեծ թվով վստահված անձանց, մինևույն ժամանակ յուրաքանչյուր հանձնաժողովում նրանց թիվը սահմանափակվում էր մինչև երկու ներկայացուցիչ, որոնցից միայն մեկը կարող էր ներկա լինել հանձնաժողովի նիստին: Վստահված անձինք նաև իրավունք ունեին վավերականացման համար ստորագրել քվեաթերթիկի հետևում: Օրենքն արգելում էր ընտրողների շրջանում փողի կամ այլ ապրանքների բաժանումը և սահմանում էր թեկնածուի գրանցման չեղարկման ընթացքը, եթե մեղադրանքները հաստատվեին Գերագույն դատարանի կողմից:

Քվերակության գործընթացը նախատեսում էր, որ քաղաքացին ստորագրեր քվեարկության թերթիկից հեշտությամբ առանձնացվող կտրոնը, որը ներառում էր ընտրացուցակում ընտրողի համարը և հաշվվում էր համայնքային ընտրական հանձնաժողովի կողմից՝ վավերացման համար: Քվեարկության ձևը էականորեն պարզեցված էր, և ընտրողները թեկնածուների անունները ջնջելու փոխարեն նշում էին կատարում իրենց նախընտրած թեկնածուի անվան դիմաց: Ըստ ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ-ի եզրակացության.

*«Այս ընտրությունները կարգավորող օրենսդրական դաշտն ակնհայտորեն բարելավվել է նախկին ընտրական օրենսդրության համեմատ: Մասնավորապես, օրենքը ներառում է դրույթներ, որոնք նպաստում են գործընթացի թափանցիկության բարձրացմանը: Օրինակ, սահմանվել են նախնական և վերջնական արդյունքների հրապարակման ժամկետները, վստահված անձանց կողմից ընտրատեղամասային արդյունքների՝ արձանագրությունների պատճենը ստանալու իրավունքը, թեկնածուների վստահված անձանց կողմից ընտրատեղամասում քվեաթերթիկների վավերականացման իրավունքը, ինչպես նաև հաշվարկից հետո տեղամասային կենտրոնների տեսանելի վայրերում ՏԸՅ-ների կողմից արձանագրությունները փակցնելու մասին դրույթը: Նախագահի ընտրության մասին օրենքը վերացրել է որոշ ընթացակարգեր, որոնք նախկինում հակասություններ էին առաջացրել: Մասնավորապես, այն արգելում է «չարժական քվեատուփեր»-ի կիրառումը, չարժական տեղամասային կենտրոնները և բացականների քվեարկությունը: Չնայած այս սահմանափակումները խոչընդոտում են ընտրելու իրավունքին, նախկին փորձը օրենսդիրներին համոզել է, որ այս քայլերն անհրաժեշտ են գործընթացի հանդեպ հանրության վստահության բարձրացման համար...*

*Ինչևէ, ինչպես ցանկացած օրենսդրական փաստաթղթի դեպքում, օրենքի իրականացումն է էականը<sup>6</sup>»:*

1996թ.-ի ընտրությունների հիմնական թեկնածուներն էին գործող նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և Ազգային ժողովրդավարական միության ղեկավար Վազգեն Մանուկյանը, որին աջակցում էր ընդդիմադիր ուժերի մեծամասնությունը: Այս ընտրություններն անցան ընտրական օրենսդրության մի շարք լուրջ խախտումներով:

ՉԼՍ-ների եվրոպական ինստիտուտի կողմից իրականացված ՉԼՍ մշտադիտարկման արդյունքների համաձայն՝ Լևոն Տեր-Պետրոսյանն ուներ իր հակառակորդների նկատմամբ էական առավելություն ընտրական ողջ գործընթացում: ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ-ն այս ընտրություններում

<sup>6</sup> Armenian Presidential Elections, 24 September 1996, Final report, OSCE/ODIHR, <http://www.osce.org/odihr/elections/armenia/14149?download=true>

ընտրական օրենսդրության լրջագույն խախտումներ է արձանագրել, ներառյալ՝ Ներքին գործերի և Պաշտպանության նախարարությունների՝ մեծ թվով չլիազորված ներկայացուցիչների ներկայությունը տեղամասային կենտրոններում: Առաքելությունը մասնավորապես մտահոգված էր քվեարկության գաղտնիության խախտումներով, հատկապես զինծառայողների քվեարկության առնչությամբ, ինչպես նաև ընտրական հանձնաժողովների՝ զինվորական ընտրացուցակների ճշգրտությունը ստուգելու անկարողությամբ: Ընդհանուր առմամբ խնդրահարույց էր ընտրողների գրանցումը՝ հաշվի առնելով քվեարկության օրը որոշ տեղամասերում մեծ թվով քվեարկողների լրացուցիչ գրանցումը: Արդյունքների ամփոփման առումով ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը նշում է, որ հաշվարկի գործընթացը տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից կազմակերպվել էր շատ ավելի անփութորեն, քան բուն քվեարկությունը: Առաքելությունն իր դիտորդությունը ամփոփել է՝ կասկածի տակ առնելով ընտրական ողջ գործընթացի իրավականությունը:

Նախագահական ընտրություններին հետևեցին զանգվածային ցույցեր, որոնց առաջնորդը Վազգեն Մանուկյանն էր: Ցուցարարները ներխուժեցին Ազգային ժողով և ծեծի ենթարկեցին խորհրդարանի խոսնակին և փոխխոսնակին: Անվտանգության ուժերը, այդ թվում՝ ռազմական տանկերը և զորքերը բերվեցին Երևան՝ վերականգնելու կարգուկանոնը և ճնշելու ցույցերը:

Հյուսիս Բայթա Ուչ կազմակերպության 1997թ.-ի Համաշխարհային զեկույցի համաձայն<sup>7</sup>.

*«Այս իրադարձությունների ընթացքում ոստիկանությունը ձերբակալեց մոտ 200 և ավելի մարդկանց, ովքեր ենթադրաբար մասնակցել էին ցույցերին: Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը արգելեց հանրային ցույցերը և զինվորական ստորաբաժանումներ բերվեցին Երևանը վերահսկելու համար, իսկ գլխավոր դատախազը հայտարարեց, որ մտադիր է մեղադրանք ներկայացնել Վազգեն Մանուկյանին և յոթ այլ ընդդիմադիր առաջնորդների՝ բռնի ուժով իշխանության տապալման փորձ կատարելու համար: Ոստիկանությունը փակեց Ազգային ժողովրդավարական միության (Վազգեն Մանուկյանի կուսակցություն), Ազգային ինքնորոշում միավորման (ընդդիմադիր փոքր կուսակցություն), Սահմանադրական իրավունքների միության (ազգայնական կուսակցություն), և Արցախ-Հայաստանի (Ղարաբաղյան հարցերով զբաղվող կազմակերպություն) գրասենյակները: Ընդդիմադիր ուժերի այս ջախջախումն, ըստ Էուրոյան, իրականություն դարձրեց պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի սեպտեմբերի 25-ի նախազգուշացումը, որ [սեպտեմբերի 25-ի] իրադարձություններից հետո, նույնիսկ եթե նրանք հավաքած լինեին ընտրողների ձայների 100 տոկոսը, ոչ բանակը, ոչ էլ ազգային անվտանգությունն ու Ներքին գործերի նախարարությունը չէին ճանաչի այդպիսի քաղաքական առաջնորդներին»:*

Ըստ Բերքլիի համալսարանի պատմության դասախոս Յ. Աստուրյանի<sup>8</sup> ԿԸՀ չորս անդամները սեպտեմբերի 25-ին հայտարարել էին, որ Մանուկյանն իրականում ստացել էր ձայների ավելի քան 60%-ը: 1998թ.-ի փետրվարին Տեր-Պետրոսյանը ստիպված էր հրաժարական տալ, և վարչապետ Ռոբերտ Քոչարյանը ժամանակավոր ստանձնեց նախագահի պարտականությունները մինչև 1998թ.-ի մարտին իր ընտրվելը:

**1998թ. նախագահական ընտրություններ.** 1998թ.-ի ընտրությունները կարգավորվում էին 1996թ.-ի Հանրապետության նախագահի ընտրության մասին ՀՀ օրենքով: Այս օրենքը նախատեսում էր, որ նախագահի թեկնածու կարող էին լինել այն անձինք, ովքեր առնվազն 35 տարեկան էին, ՀՀ քաղաքացի էին եղել վերջին տաս տարվա ընթացքում և այդ ժամանակահատվածում մշտապես բնակվել էին Հայաստանի Հանրապետությունում: Մինչև 1997թ.-ի մարտը ՀՀ գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանը Լեռնային Ղարաբաղի նախագահն էր, որից հետո նշանակվել էր ՀՀ վարչապետի պաշտոնում: Սա նշանակում է, որ ըստ

<sup>7</sup> World Report 1997, Human Rights Watch, [http://www.hrw.org/reports/1997/WR97/HELSINKI-01.htm#P95\\_35834](http://www.hrw.org/reports/1997/WR97/HELSINKI-01.htm#P95_35834)

<sup>8</sup>From Ter-Petrosian To Kocharian: Leadership Change In Armenia, Stephan H. Astourian, 2001[http://iseees.berkeley.edu/bps/publications/2000\\_04-asto.pdf](http://iseees.berkeley.edu/bps/publications/2000_04-asto.pdf)

օրենսդրության, նա իրավունք չուներ առաջադրելու իր թեկնածությունը: Սակայն, նրա գրանցումը հաստատվել է, և ԿԸՀ-ն որևէ քայլ չի ձեռնարկել ներկայացված փաստաթղթերի վավերականությունը ստուգելու ուղղությամբ:

1998թ.-ի մարտի 16-ին կայացավ նախագահական ընտրությունների առաջին փուլը: Գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանը ստացավ ձայների 38.5%-ը, իսկ նրա հիմնական հակառակորդ՝ Ջայաստանի հորհրդային Սոցիալիստական Հանրապետության կոմունիստական կուսակցության նախկին առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը ստացավ ձայների 30.5%-ը: Ռոբերտ Քոչարյանը հաղթեց ընտրությունների՝ 1998թ.-ի մարտի 30-ին տեղին ունեցած երկրորդ փուլում՝ ստանալով ձայների 58.9%-ը, որն ավելի շատ էր, քան իր աջակիցների կողմից ներկայացված հարցումների տվյալները<sup>9</sup>:

Իր վերջնական զեկուլյցում ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ դիտորդական առաքելությունը եզրակացրել է.

*«Մարտի 16-ին և 30-ին կայացած արտահերթ նախագահական ընտրությունները չեն համապատասխանում ԵԱՀԿ չափանիշներին, որոնք Ջայաստանը հանձնառել էր 1990թ.-ի Կոպենհագենյան փաստաթղթով: Թե՛ 1995թ.-ին, թե՛ 1996թ.-ին Ջայաստանն անցկացրեց այնպիսի ընտրություններ, որոնց բնորոշ էին լրջագույն բացթողումներ: Այս ընտրությունները որոշ առումներով ավելի բարելավված էին, քան 1996թ.-ի ընտրությունները, սակայն 1996թ.-ի ընտրությունները պատշաճ չափանիշ չեն ԵԱՀԿ հանձնառություններին համապատասխանելու տեսանկյունից ընտրական գործընթացը գնահատելու համար»:<sup>10</sup>*

Վերահաստատելով օրենսդրական դաշտի մասին իր դիրքորոշումը՝ Առաքելությունն արտահայտել է իր լուրջ մտահոգությունն առ այն, որ 1998թ.-ի մարտի 2-ին Ազգային ժողովը դեմ քվեարկեց տեղական, անկուսակցական դիտորդների հավատարմագրմանը: ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը արձանագրել է ապօրինի քարոզչության լուրջ դեպքեր, բռնության դեպք Վազգեն Մանուկյանի նախընտրական հավաքի ժամանակ, լրատվամիջոցների կողմից Ռոբերտ Քոչարյանի օգտին անհավասարաչափ լուսաբանում, ընտրողների, վստահված անձանց և հանձնաժողովի անդամների նկատմամբ ճնշումներ՝ հատկապես Ռ. Քոչարյանի վստահված անձանց կողմից, կողմնակի անձանց, այդ թվում՝ ոստիկանության և անվտանգության ուժերի, ՏԻՄ ներկայացուցիչների ներկայություն տեղամասային կենտրոններում, որը ճնշող ազդեցություն է ունեցել, եղել են կուտակումներ, քարոզչություն, քվեարկության գաղտնիության խախտումներ՝ հատկապես գինվորականների քվեարկության դեպքում, քվեատուփի և կտրոնների տուփի լցումում, ձայների հաշվարկի վատ կազմակերպում, երկրորդ փուլի ընթացքում քվեարկողների թվի տարօրինակ և կտրուկ աճ (88/1 (839.4%), 8/17 (105.2%), 5/17 (98.8%), 4/4 (97.6%) և 7/28 (99.96%)), արձանագրությունների կեղծում, բողոքարկման անարդյունավետ գործընթաց և ընտրախախտումների ոչ պատշաճ քննություն:

**1999թ.-ի հորհրդարանական ընտրություններ.** Երկրորդ գումարման Ազգային ժողովն ընտրվել է 1999թ.-ի մայիսի 30-ին՝ նոր ընդունված Ընտրական օրենսգրքին համապատասխան (131 պատգամավոր, 75-ը մեծամասնական և 56-ը համամասնական ընտրակարգով): Տեղերը բաշխվել են հետևյալ ձևով. «Միասնություն» դաշինք՝ 41.69% (29 պատգամավոր), Ջայաստանի կոմունիստական կուսակցություն՝ 12.09% (8 պատգամավոր), «Օրենք և

<sup>9</sup>N.b. An alternative poll suggested that Karen Demirchyan enjoyed support of 53% of the voters, while Kocharyan lagged with 36%, (Source: Armenians Vote for New President, Los-Angeles Times, Vanora Bennett, March 31, 1998, <http://articles.latimes.com/1998/mar/31/news/mn-34533>)

<sup>10</sup> Republic of Armenia Presidential Election March 16 and 30, 1998 Final Report, OSCE/ODIHR, <http://www.osce.org/odihr/elections/armenia/14192?download=true>

միասնություն» դաշինք՝ 7.96% (6 պատգամավոր), Հայ Յեղափոխական Դաշնակցություն՝ 7.86% (5 պատգամավոր), «Օրինաց երկիր» խմբակցություն՝ 5.28% (4 պատգամավոր)<sup>11</sup>:

1999թ.-ի փետրվարին ընդունված Ընտրական օրենսգիրքը համապարփակ փաստաթուղթ էր, որը կարգավորում էր խորհրդարանական, նախագահական և տեղական ինքնակառավարման ընտրությունները: 1999թ.-ի խորհրդարանական ընտրությունների մասին վերջնական զեկուլցում ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը մի քանի մտահոգություն է ներկայացրել Օրենսգրքի մի քանի դրույթների՝ բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովների կազմի, հանձնաժողովի անդամների կարգավիճակի, հանձնաժողովների աշխատանքի շարունակականության և Կենտրոնական և Մարզային ընտրական հանձնաժողովներում տեխնիկական անձնակազմի նշանակման, մի շարք ընտրական գործընթացներում թափանցիկության պակասի, ընտրության ընթացքում հանձնաժողովի աշխատանքային տարածքում կողմնակի անձանց ներկայության, զինվորական անձնակազմի գրանցման և քվեարկության, ընտրական գործընթացների բարոգության, բողոքների ներկայացման և վեճերի լուծման վերաբերյալ դրույթների անորոշության, ինչպես նաև օրենքով սահմանված ընթացակարգի ոչ պատշաճ պաշտպանության վերաբերյալ<sup>12</sup>: Ինչ վերաբերում է ընտրությունների փաստացի կազմակերպմանը, ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը մտահոգություններ է ներկայացրել ընտրական հանձնաժողովների ձևավորման և անդամների կարգավիճակի, ընտրացուցակների ճշգրտության, ընտրական ժամանակացույցի պատշաճ պահպանման, զինվորական անձնակազմի քվեարկությանը վերաբերող ողջ գործընթացի, ընտրություններին փախստականների մասնակցության, քվեարկության և հաշվարկի ընթացքում ընտրատեղամասերում կողմնակի անձանց ներկայության և ընտրատեղամասերում հաշվարկի՝ ժամանակին, թափանցիկ և պատշաճ իրականացման, ինչպես նաև Մարզային ընտրական հանձնաժողովի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից արդյունքների ամփոփման և հրապարակման վերաբերյալ: Առաքելությունը ևս մեկ անգամ արձանագրեց, որ թեև Հայաստանում 1999թ.-ի ընտրությունները ավելի բարելավված էին 1995թ., 1996թ. և 1998թ.-ի ընտրությունների համեմատ, սակայն նախորդ ընտրությունները համեմատության պատշաճ հիմք չէին: Օրենսգիրքը սահմանում էր ընտրությունների եռաստիճան կառավարման համակարգ՝ բաղկացած Կենտրոնական ընտրական հանձնաժողովից (ԿԸՀ), Երևանում և տասը մարզերում գործող Մարզային ընտրական հանձնաժողովներից (ՄԸՀ) և Տեղամասային ընտրական հանձնաժողովներից (ՏԸՀ): Նոր օրենսգիրքը ԿԸՀ-ի և ՄԸՀ-ի ձևավորման այլ մեխանիզմ էր սահմանում. երեք անդամ նշանակվում էր կառավարության կողմից, գործող կամ արձակված Ազգային ժողովում պատգամավորական խմբակցություն ունեցող և իրենց առաջադրումը պաշտպանելու պաշտոնաթերթիկներում առնվազն 30 հազար վավեր ստորագրություն ներկայացրած կուսակցությունները նշանակում էին մեկական անդամ, գործող կամ արձակված Ազգային ժողովում պատգամավորական խմբակցություն չունեցող, բայց իրենց առաջադրումը պաշտպանելու պաշտոնաթերթիկներում առնվազն 30 հազարից առավել վավեր ստորագրություններ ներկայացրած առաջին 5 կուսակցությունները նշանակում էին մեկական անդամ: Վենետիկի հանձնաժողովը գտնում էր, որ ԿԸՀ-ի նկատմամբ վերահսկում չպետք է լինի քաղաքական կուսակցությունների կամ գործադիր իշխանության կողմից<sup>13</sup>:

Ըստ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի՝ 1999թ.-ի խորհրդարանական ընտրությունների նախապատրաստման ընթացքում Հայաստանի իշխանություններին աջակցելու մի քանի խոշոր միջազգային ծրագրեր կային: ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի փորձագետների մի խումբ ժամանել էր Հայաստան՝ ԿԸՀ-ին աջակցելու, ՄԸՀ-ների համար ուղեցույց մշակելու և նրանց վերապատրաստելու համար:

<sup>11</sup> Հայոց խորհրդարանների պատմություն, ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք, <http://parliament.am/parliament.php?id=parliament&lang=arm&enc=utf8>

<sup>12</sup> Republic of Armenia Parliamentary Election 30 May 1999 Final Report, OSCE/ODIHR, <http://www.osce.org/odihr/elections/armenia/14203?download=true>

<sup>13</sup> Joint Assessment of the Amendments to the Electoral Code of the Republic of Armenia Adopted in the First Reading on 7 May, 2002, 30 May, 2002

Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (ԸՀՄՀ) թիմը կենտրոնացել էր ՏԸՀ-ների համար քվեարկության օրվա գործողությունները ներկայացնող ուղեցույցի պատրաստման և երկրի ողջ տարածքում ՏԸՀ-ների վերապատրաստում իրականացնելու վրա:

Ավելին, ԸՀՄՀ-ն և ՄԱԶԳ-ը և՛ ուղղակիորեն, և՛ տեղական կազմակերպությունների միջոցով իրականացրել են ընտրողների իրազեկմանն ուղղված մի շարք ծրագրեր, տպագրվել են պաստառներ, պատրաստվել են հեռուստագովազդներ և գովազդներ տպագիր մամուլում, ինչպես նաև իրականացվել են սեմինարներ դատավորների և ընտրական գործընթացների համար պատասխանատու այլ անձանց համար: Ազգային ժողովրդավարական ինստիտուտը հիմնականում զբաղվում էր վստահված անձանց վերապատրաստումներով, վստահված անձանց և դիտորդների համար նախատեսված հատուկ սեմինարների իրականացմամբ, ինչպես նաև նրանց՝ օրենսգրքով սահմանված և ԿԸՀ-ի կողմից կարգավորվող իրավունքներն ու պարտականությունները նկարագրող բուկլետների տպագրությամբ: ԱԺ-ն և ՄԱԶԳ-ն ներգրավված են եղել նաև տեղական և անկուսակցական դիտորդների վերապատրաստման ծրագրերում:

Այդուհանդերձ, ԵԱՀԿ-ն նկատում է, որ ԿԸՀ-ն առանձնապես ցանկություն չունեի համագործակցել ԸՄԴԱ-ների հետ և ժամանակին պատասխանել նրանց մտահոգություններին: ԿԸՀ-ն պաշտոնապես ընդունեց ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ուղեցույցը քվեարկությունից ընդամենը տաս օր առաջ, այնուամենայնիվ, բոլոր ՄԸՀ-ները կարողացան մասնակցել վերապատրաստմանը: ՏԸՀ անդամների համար ԸՄԴԱ-ի կազմած Ձեռնարկը պաշտոնապես չընդունվեց ԿԸՀ-ի կողմից: Այնուամենայնիվ, ԸՄԴԱ-ի դասընթացավարները ամբողջ երկրով մեկ ՏԸՀ-ների համար կազմակերպեցին դասընթացներ, բացառությամբ Երևանի ՏԸՀ-ների, որտեղ Երևանի ՄԸՀ-ն հրաժարվեց կազմակերպել դասընթացները: ՄԱԶԳ-ի՝ ընտրացուցակների և հաշվարկների համակարգչայնացված ծրագիրը չընդունվեց ԿԸՀ-ի կողմից, ըստ այդմ՝ նրանց կիրառումը միօրինակ և արդյունավետ չէր: Տասներկու տեղական ՀԿ-ներ հավատարմագրվեցին ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու համար: Ընտրացուցակները կազմվում և ճշտվում էին համայնքների ղեկավարների կողմից:

Քվեարկության օրը նույնականացման փաստաթղթերի հիման վրա ընտրողների գրանցման ճկուն մեխանիզմի վերացումը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից գնահատվեց որպես նշանակալից բարելավում նախորդ՝ 1998թ.-ի նախագահական ընտրությունների համեմատ, երբ մեծ թվով ընտրողների անուններ ավելացվեցին ընտրացուցակներում ընտրության երկրորդ փուլի ժամանակ:

Այդպես էլ չէր լուծվել զինվորական ցուցակների գաղտնիության և բազմակի քվեարկության նպատակով դրանց հավանական չարաչափման խնդիրը: Ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի.

*«Չորամասերում արգելվել էին շարժական քվեատուփերը, որոնք մտահոգություններ էին առաջացրել 1998թ.-ի նախագահական ընտրությունների ժամանակ: Չինվորական հրամանատարներին ցուցում էր տրվել զինծառայողներին տեղափոխել համապատասխան ընտրական տեղամասեր, նրանց մեքենաներից դուրս թողնել ընտրատեղամասից ոչ ավել, քան 50 մետր հեռավորության վրա և նրանց ազատ արձակել երկու ժամով, որպեսզի կարողանան իրականացնել իրենց ընտրական իրավունքն՝ առանց վերահսկողության: Այնուամենայնիվ, չնայած ընդունված ընթացակարգերին, մի շարք դիտորդներ արձանագրել են, որ հրամանատարները մոտիկից վերահսկել են զինվորներին և նրանց բաց են թողել միայն մի քանի րոպեով՝ քվեաթերթիկը քվեատուփի մեջ զցելու համար: Ավելին, դիտորդներն արձանագրել են, որ որոշ դեպքերում զինծառայողներին ցուցված էր քվեարկել Միասնություն դաշինքի օգտին: Այսպիսով, զինվորականների քվեարկությունը չի համապատասխանել ընթացակարգերին և 1998թ.-ի նախագահական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ-ի վերջնական զեկույցում*

*տրված հանձնարարականներին: Չինվորականների քվեարկության ընթացքը մնում է մտահոգիչ և պետք է լուծում ստանա մինչև հաջորդ ընտրությունները»:*

Հարկ է նշել, որ այս և առաքելությունների կողմից բացահայտված մի շարք այլ խնդիրներ շարունակվել են բոլոր ընտրությունների ընթացքում:

**2003թ. նախագահական ընտրություններ.** 2003թ.-ի նախագահական ընտրությունները Հայաստանում տեղի ունեցան փետրվարի 19-ին և մարտի 5-ին: Հիմնական թեկնածուները գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանը և Ստեփան Դեմիրճյան<sup>14</sup> էին:

ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը արձանագրել է, որ թեև ընտրությունների ընթացքում ակնհայտ ակտիվ քարոզարշավ էր ընթանում երկրի ողջ տարածքում, ընդհանուր գործընթացը թեկնածուների համար հավասար պայմաններ չէր ապահովում: Քվեարկությունը, հաշվարկը և ամփոփումը մի շարք խախտումներով ընթացան, այդ թվում՝ լայնածավալ լցոնումներով:

*«Նոր փոփոխված ընտրական օրենսգիրքը ապահովում էր միջազգային չափանիշներին համապատասխան ընտրություններ անցկացնելու հիմք: Սակայն դրա կատարման համար չկար ԵԱՀԿ-ի առջև ստանձնած ժողովրդավարական ընտրությունների անցկացման պարտավորության իրականացման համար բավարար քաղաքական կամք: Քաղաքական մթնոլորտը լարված էր և աչքի էր ընկնում ճնշումներով, քարոզչական միջոցառումների խոչընդոտման առանձին դեպքերով, ինչպես նաև բռնության մեկ լուրջ դեպքով: Հանրային ռեսուրսները լայնորեն օգտագործվում էին գործող նախագահի աջակցության նպատակով: Ընտրությունների երկրորդ փուլը ստվերվեց ընդդիմության ավելի քան 200 աջակիցների ձերբակալությամբ, որը հակասում էր ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորություններին, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի հտորհդարանական վեհաժողովի բանաձևին: Ավելի քան 80 մարդ դատապարտվեց 15-օրյա կալանքի՝ հաճախ փակ լսումների արդյունքում և առանց իրավաբանական աջակցության հնարավորության:*

*Հանրային հեռուստատեսությունը և պետական ֆինանսական աջակցություն ստացող հիմնական տպագիր լրատվամիջոցը չափազանց կողմնակալ էին հօգուտ գործող նախագահի՝ խախտելով թեկնածուների մասին հավասարակշիռ հաղորդելու իրենց օրենսդրական պարտականությունն ու լրատվամիջոցների հավասար հասանելիության վերաբերյալ ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորությունը: Ընտրության ողջ ընթացքում «Ա1+» անկախ հեռուստաալիքի հեռարձակումը դադարեցված էր: Ընտրությունների երկրորդ փուլում դրական զարգացում էր երկու թեկնածուների հեռուստաբանավեճը, որն առաջին անգամ էր տեղի ունենում Հայաստանում: Ընդհանուր առմամբ ընտրությունների վարչարարությունը տեխնիկական մասով արդյունավետ էր կազմակերպված: Ընտրական հանձնաժողովների ձևավորման բանաձևը հանգեցրեց հանձնաժողովներում անդամների անհավասարակշիռ ներկայացվածությանը, ինչը հանգեցրեց ընդդիմադիր անդամների անվստահությանը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ժամանակին չհրապարակեց նախնական արդյունքների մանրամասն հաշվետվությունը՝ նպաստելով գործընթացի հանդեպ անվստահության խորացմանը: Չնայած ընտրացուցակների բարելավմանն ուղղված մի շարք օգտակար ջանքերին՝ դրանք մնացին խնդրահարույց»:<sup>15</sup>*

<sup>14</sup>Ծ.թ. Ստեփան Դեմիրճյանը Ազգային ժողովի նախկին նախագահ և նախագահի նախկին թեկնածու Կարեն Դեմիրճյանի որդին էր: Կարեն Դեմիրճյանը 1999 թ. հոկտեմբերի 27-ին սպանվեց Ազգային ժողովում, երբ սպանվեցին նաև վարչապետ Վազգեն Սարգսյանը, Ազգային ժողովի փոխխոսնակներ Յուրի Բախշյանը և Ռուբեն Միրոյանը, պատգամավորներ՝ Արմենակ Արմենակյանը, Հենրիկ Աբրահամյանը և Միքայել Քոթանյանը և Օպերատիվ հարցերի նախարար Լեոնարդ Պետրոսյանը:

<sup>15</sup> Republic Of Armenia Presidential Election 19 February and 5 March 2003, Final Report, OSCE/ODIHR, <http://www.osce.org/odihr/elections/armenia/14054?download=true>



Ընտրական օրենսգիրքը փոփոխվել էր նախքան ընտրությունները և արտացոլում էր ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի կողմից ներկայացված որոշ հանձնարարականներ: Ըստ փոփոխությունների՝ 11 մարզային ընտրական հանձնաժողովները փոխարինվել էին 56 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներով, որոնք պիտի ապահովեին ընտրությունների ավելի արդյունավետ կազմակերպումը: Այդուհանդերձ, օրենսդրության իրագործումը մտահոգիչ էր, հատկապես ընտրական խախտումների համար պատասխանատվության ենթարկելու տեսանկյունից: Քվեարկության օրվա նախօրեին տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների հեռացումը ընտրությունների արդյունավետ կազմակերպման համար մեծ խոչընդոտ էր, որ կարծես թե դիտավորյալ էր արվել:

Գործող թեկնածուի օգտին վարչական ռեսուրսների լայնածավալ օգտագործումը և ընտրողների անձնագրերի առգրավման փաստերը հաստատվել են երկրի ողջ տարածքում առաքելություն իրականացրած դիտորդների կողմից: Պետական ոլորտի աշխատողներին, գործարանների աշխատողներին, ուսուցիչներին, ուսանողներին և մյուսներին հրահանգվել էր մասնակցել գործող նախագահի հավաքներին երկրի ողջ տարածքում, մինչդեռ ընդդիմադիր թեկնածուները դժվարությամբ էին քարոզարշավ իրականացնում մարզերում: Տեղական և միջազգային դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների մեծամասնությունն ընտրություններն ընդհանուր առմամբ ոչ բավարար գնահատեցին, իսկ հետընտրական ցույցերը միայն հաստատեցին հանրային անվստահության փաստը:

Նախագահի թեկնածու Ստեփան Դեմիրճյանը վիճարկեց ընտրության արդյունքները ՀՀ Սահմանադրական դատարանում: 2003 թ. ապրիլի 16-ի որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստարկված համարելով քվեաթերթիկների լցումն, ձայների սխալ հաշվարկի, այլոց փոխարեն քվեարկության եւ այլ բնույթի էական խախտումների առկայությունը և դրանց ոչ պատշաճ բնույթունը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների և դատարանների կողմից, այնուամենայնիվ մերժեց հայցը, գտնելով, որ խախտումների ծավալը չի անդրադարձել ընտրության արդյունքների վրա: Կարևորելով հանրության վստահությունը Սահմանադրական դատարանն առաջարկեց մեկ տարվա ընթացքում անցկացնել վստահության հանրաքվե<sup>16</sup>, որը սակայն այդպես էլ չիրականացվեց:

**2003թ. խորհրդարանական ընտրություններ.** Հայաստանի Հանրապետության երրորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները (131 պատգամավոր՝ 75 համամասնական և 56 մեծամասնական կարգով) տեղի ունեցան 2003թ.-ի մայիսի 25-ին: Արդյունքում ձևավորված խմբակցություններն էին՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն (40 պատգամավոր), Օրինաց երկիր (20 պատգամավոր), Արադարություն դաշինք (14 պատգամավոր), Հայ Յեղափոխական Դաշնակցություն (11 պատգամավոր), Ազգային միաբանություն (8 պատգամավոր), Միավորված աշխատանքային կուսակցություն (6 պատգամավոր) և ժողովրդական պատգամավորների պատգամավորական խումբ (16 պատգամավոր), իսկ 14 պատգամավոր չմիացան ոչ մի խմբակցության կամ խորհրդարանական խմբի:

Ըստ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի դիտորդական առաքելության տված գնահատականի՝ խորհրդարանական ընտրությունները 2003թ.-ի նախագահական ընտրությունների համեմատ բարելավվել էին, սակայն ձայների հաշվարկի և ամփոփման մասին ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կարծիքը դրական չէր: Ընտրախախտումներ իրականացնողները պատասխանատվության չենթարկվեցին, ինչը խորացրեց անպատժելիության մթնոլորտը: Հանրային հեռուստատեսությունը մրցակիցներին հավասարաչափ եթեր տրամադրեց՝ իրականացնելով իր օրինական պարտավորությունը,

<sup>16</sup> Հայաստանի Հանրապետության նախագահի 2003 թվականի մարտի 5-ի ընտրության արդյունքները վիճարկելու վերաբերյալ գործով ՀՀ Սահմանադրական Դատարանի որոշում, 16 ապրիլի, 2003 թ. <http://www.concourt.am/armenian/decisions/common/2003/sdv-412.htm>

սակայն մասնավոր հեռուստաընկերությունները բավականին կողմնակալ գտնվեցին: Ինչպես բոլոր նախկին ընտրությունների ժամանակ, կանանց ներկայացվածությունը որպես թեկնածու և քաղաքական կուսակցության ներկայացացուցիչ խիստ սահմանափակ էր: Ընդհանուր հետևողականության, թափանցիկության և պրոֆեսիոնալիզմի բացակայության պատճառով ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը ընտրությունների անցակցումը գնահատել է ոչ արդյունավետ:

*«Կարևոր որոշումները կայացվեցին ուշ և առանց բավականաչափ հստակության: Թեկնածուների, քաղաքական կուսակցությունների և դաշինքների գրանցման վերաբերյալ օրենսդրությունը կիրառվեց անհետևողականորեն և ընտրողական կարգով: Արդյունքների աղյուսակավորման գործընթացը թափանցիկ իրագործելու փորձերը՝ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի նախորդ հաշվետվություններում տրված հիմնական առաջարկը, խոչընդոտվեց Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸԸՀ)՝ օրենքին չհետևելու պատճառով: Չնայած որոշ համայնքներում ընտրացուցակները բարելավվեցին, հետագայում պահանջվեց դրանք ավելի բարձր ճշգրտության հասցնել: Քվեարկությունը դիտորդների կողմից այցելած ընտրատեղամասերից շատերում դրական գնահատվեց: Սակայն, խնդիրներ կային, որ շարունակ պետք է դիտարկվեին, ներառյալ՝ չլիազորված անձանց ներկայությունը ընտրատեղամասերում, կուսակցության կամ թեկնածուի ներկայացուցիչների նկատմամբ (վստահված անձանց) անհամապատասխան սահմանափակումները և զինվորականների կողմից բաց քվեարկությունները: Տեղական դիտորդները կրկին ներկայացված էին մեծ թվով, և նրանց իրավասությունը ավելի լայնորեն ճանաչվեց, քան նախագահական ընտրությունների ժամանակ:»<sup>17</sup>*

Խախտումներից էին նաև քվեատուփերի լցումները, արդյունքների կեղծումը, նաև դիտորդների և վստահված անձանց նկատմամբ ահաբեկումները: Սահմանադրական դատարանը չեղյալ հայտարարեց երկու ընտրատարածքների արդյունքները և հրահանգեց նոր ընտրություններ անցկացնել, քանի որ ընտրախախտումները ազդել էին արդյունքների վրա: Այնուամենայնիվ, ընտրության մասնակիցների քանակի կտրուկ նվազումը (ավելի քան 350 000-ով), համեմատած 2003թ. նախագահական ընտրությունների երկրորդ փուլի մասնակցության հետ, ցույց տվեց, որ քաղաքական կուսակցությունները և հասարակությունը վստահություն չունեին ընտրական գործընթացի հանդեպ:

**2007թ.-ի խորհրդարանական ընտրություններ.** ՀՀ Ազգային ժողովի չորրորդ գումարման ընտրությունները կայացան 2007թ.-ի մայիսին, որի արդյունքում ձևավորվեց հինգ խորհրդարանական խմբակցություն (90 համամասնական և 41 մեծամասնական)՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն (64 պատգամավոր), Բարգավաճ Հայաստան (25 պատգամավոր), Հայ Յեղափոխական Դաշնակցություն (16 պատգամավոր), Օրինաց երկիր (8 պատգամավոր), Ժառանգություն (7 պատգամավոր): 11 պատգամավոր ոչ մի խմբակցությունում չընդգրկվեց: Առաջին անգամ ոստիկանության վերահսկողության ներքո գործում էր համակարգչային կենտրոնացված ընտրացուցակ: ԿԸՀ-ին և մյուսպետական և տեղական կառույցներին զուգահեռ ոստիկանությունն ակտիվորեն քայլեր էր ձեռնարկում շտկելու անճշտությունները, այդ թվում՝ հանրության կողմից ճշգրտման համար ընտրացուցակները ժամանակին փակցնելով, ընտրողների գրանցամատյանը ԿԸՀ-ի կայքում տեղադրելով, ինչպես նաև բացելով հեռախոսային թեժ գծեր՝ քաղաքացիներին առցանց աջակցություն տրամադրելու համար:

*«Ընտրական օրենսգիրքը, որը 2003 թ. խորհրդարանական ընտրություններից ի վեր զգալիորեն փոփոխվել և կատարելագործվել է, ամուր հիմքեր ապահովեց ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար՝ չնայած որ դեռ թերություններ կան: Դրանք հիմնականում կապված են սահմանված ժամկետից*

<sup>17</sup> Հայաստանի Հանրապետություն, խորհրդարանական ընտրություններ, 25 մայիսի 2003 Վերջնական հաշվետվություն, ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ, <http://www.osce.org/hy/odihr/elections/armenia/42371?download=true>

շուտ և անուղղակի նախընտրական քարոզչության իրականացման մասին հստակ դրույթների բացակայության և նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման իրավական կարգավորման հետ, որն ընտրությունների մասնակիցներին հնարավորություն է տալիս գերազանցել քարոզարշավի ֆինանսավորման ամպ սահմանափակումները: Բացի այդ, բողոքների և բողոքարկման գործընթացում ի հայտ եկան իրավական դաշտի ներքին հակասությունները: Ընտրակաշառք բաժանելու հնարավոր դեպքերի նկատմամբ չկիրարկվեցին պատժամիջոցներ, և հրապարակայնորեն հնչեցված մտահոգությունների կապակցությամբ ընդհանուր առմամբ քայլեր չձեռնարկվեցին՝ պաշտոնապես բողոքներ չներկայացվելու պարագայում»<sup>18</sup>:

ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը դիտորդական առաքելությունն իրականացրել է ԵԱՀԿ Խորհրդարանական Ասամբլեայի, ԵՏԽՎ-ի և Եվրոպական Խորհրդարանի հետ համատեղ: Ընդունելով, որ փոփոխված ընտրական օրենսգիրքը ապահովում էր ժողովրդավարական ընտրությունների հիմքը, ԸՄԴԱ-ներն այնուամենայնիվ նշեցին, որ այդ օրենսգիրքը հստակ չի տարանջատում կուսակցական գործունեությունն ու քարոզարշավային գործողությունը, ըստ պատշաճի չի կարգավորում քարոզարշավի ֆոնդահայթայթումը և չի անդադրաձևում դիմումների և բողոքների ընթացակարգում ամպ հակասություններին: Փոփոխությունները նաև բացառում էին երկրից դուրս քվեարկության հնարավորությունը և երկքաղաքացիություն ունեցող անձանց քվեարկության հնարավորությունը: Ընտրական հանձնաժողովի անդամների նշանակման կարգը ևս փոփոխված էր. ԿԸՀ-ն յուրաքանչյուր ԸԸՀ-ի համար առաջադրում էր մեկ անդամ, որն իր հերթին մեկական անդամ էր առաջադրում յուրաքանչյուր ՏԸՀ-ի համար, որը գործում էր նույն ԸԸՀ-ի ենթակայության ներքո: Փոփոխված Ընտրական օրենսգիրքը սահմանում էր, որ ԿԸՀ մեկ անդամ պետք է առաջադրվի ՀՀ նախագահի կողմից, մեկ անդամ՝ յուրաքանչյուր Խորհրդարանական խմբակցության կողմից, մեկ անդամ՝ ժողովրդական պատգամավոր Խորհրդարանական խմբի և մեկ անդամ՝ դատական մարմինների կողմից: ԸԸՀ-ներում հիմնականում գերիշխում էին Հայաստանի Հանրապետական Կուսակցությունը, Հայ Յեղափոխական Դաշնակցությունը և նախագահի նշանակած անձինք: Ինչպես արձանագրում են ԸՄԴԱ-ները.

«ՏԸՀ ղեկավար «եռյակ»-ների կազմն ավելի բազմազան է եղել, քան ԸԸՀ-ներինը: Ընտրական օրենսգրքի համաձայն, ՏԸՀ-ում պաշտոնի բոլոր թեկնածուները պետք է նախապես վերապատրաստված և որակավորման սերտիֆիկատ ստացած լինեն: ՏԸՀ-ների անդամների հետ խոսելիս ԸՄԴԱ-ն ներկայացնող դիտորդները նկատել են, որ նրանցից շատերը տեղյակ չեն եղել, թե որ սուբյեկտի կողմից են իրենք նշանակված ՏԸՀ-ի անդամ: ՏԸՀ-ների որոշ անդամներ դիտորդներին հայտնել են, որ իրենք ներկայացնում են «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ կուսակցություն, որը ներկայացված չի եղել նախորդ գումարման Ազգային ժողովում և, հետևաբար, իրավունք չի ունեցել ընտրական հանձնաժողովների անդամների նշանակումներ կատարել»:

Ոստիկանությունը, որն ընտրացուցակների հիմնական պատասխանատուն էր, ինչպես նաև ԿԸՀ-ն, փորձեցին հանրությանը կոչ անել ստուգել արդեն առցանց հասանելի ընտրացուցակները և հաղորդել սխալների մասին, սակայն նույնիսկ այն դեպքում, երբ պարզվում էր, որ ընտրողը ներկա չէր, նրա անունը չէր հեռացվում ցուցակից: Օրենքը նախատեսում էր, որ մրցակիցները ներկայացնեն իրենց նախընտրական հիմնադրամների վերաբերյալ հաշվետվությունները ընտրություններից վեց օր անց, որից հետո դրանք ստուգվում են Վերահսկիչ-վերստուգիչ Ծառայության կողմից և հրապարակվում էին ԿԸՀ-ի կողմից կամ խախտումների դեպքում ներկայացվում էին դատարան, չնայած ԿԸՀ-ն համապատասխան իրավասություն չունեի ուսումնասիրելու, թե արդյոք կուսակցությունը կամ

<sup>18</sup>Հայաստանի Հանրապետություն, Խորհրդարանական ընտրություններ, 12 մայիսի 2007 Վերջնական հաշվետվություն, ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ, <http://www.osce.org/hy/odihr/elections/armenia/26606?download=true>

թեկնածուն չեն թաքցնում նախընտրական հիմնադրամից դուրս կատարված գործարքները: Կուսակցությունների հայտարարագրերի ուսումնասիրությունը ևս նմանատիպ տեղեկատվություն չէր տրամադրում, քանի որ պահանջվող հայտարարագրերը ընդհանրական կատեգորիաներով էին ներկայացնում գույքի սեփականությունը և ֆինանսները: Ավելին, Արդարադատության նախարարության պետական ռեգիստրը, որին ներկայացվում են հայտարարագրերը, պատասխանատու էր միայն որոշելու, որ ամեն ինչ ժամանակին էր ներկայացվել՝ առանց բովանդակային քննության:

ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը նշում է նաև, որ Հայկական Բանակի 15-ամյակի տոնակատարությունն իշխող Հանրապետական կուսակցության կողմից ակնհայտորեն օգտագործվել է որպես քարոզչության միջոց, ինչը հակասում է իշխող կուսակցության և պետության միջև տարանջատման պահանջին: Ժառանգություն կուսակցությունը և Օրինաց երկիրը հաղորդել են, որ մի շարք գովազդային ընկերություններ մերժել են տրամադրել գովազդային վահանակի տարածքներ, այն դեպքում, երբ վահանակների ճշող մեծամասնությունը, հատկապես Երևան քաղաքում, օգտագործվում էին Հանրապետական կուսակցության և Բարգավաճ Հայաստանի գովազդի համար:

Տեղական և միջազգային դիտորդներն արձանագրել են ընտրակաշառքի բազմաթիվ դեպքեր, սակայն նման պնդումները դժվար էր ապացուցել, քանի որ Քրեական օրենսգրքը պատասխանատվություն էր նախատեսում կաշառք վերցնելու, այլ ոչ թե տալու համար, ինչը նշանակում էր, որ կաշառք վերցնող ընտրողներն իրենք կարող էին պատասխանատվության ենթարկվել և այդ իսկ պատճառով նման տեղեկատվություն չէին տրամադրի:

*«Քարոզչության ընթացքում ընտրողներին նյութական շահագրգռում տրամադրելու վերաբերյալ հնչեցված բազմաթիվ մեղադրանքների և մի քանի հաստատված դեպքերի առկայությունը վկայում է, որ ապրանքների և ծառայությունների բնահրեղեն հանգանակություններ են կատարվել որոշ կուսակցությունների և թեկնածուների քարոզարշավներին՝ թեկնածուների կամ այլ անձանց կամ կազմակերպությունների կողմից: Ընտրական օրենսգրքը չի նախատեսում քարոզարշավին բնահրեղեն հանգանակություններ կատարելու ուղղակի արգելք կամ դրանք բացահայտելու պահանջ: Այնուհանդերձ, ընտրակաշառքն արգելող նորմը, ըստ երևույթին, պետք է որ կիրառելի լիներ այն իրավիճակների նկատմամբ, որոնցում թեկնածուները կամ կուսակցություններն "անձամբ կամ այլ եղանակով" նյութական շահագրգռում էին տրամադրում ընտրողներին»:*

Տեղական դիտորդական առաքելությունները քննադատում էին ԸՄԴԱ-ներին ընտրախախտումների լրջությունը օբյեկտիվորեն չզննահատելու համար: Նրանք պնդում էին, որ 2007թ.-ի խորհրդարանական ընտրությունները ոչ արդար էին, ոչ էլ ժողովրդավարական, ավելին, համատարած ճնշումները ազդել էին ընտրությունների արդյունքների վրա:

**2008թ.-ի նախագահական ընտրություններ.** 2008թ.-ի նախագահական ընտրությունները Հայաստանում կայացան փետրվարի 19-ին: Ըստ Սահմանադրության՝ գործող նախագահ Ռ. Քոչարյանը չէր կարող երրորդ անգամ ղնել իր թեկնածությունը, այդպիսով՝ նա իր աջակցությունը հայտնեց իր կողմից մեկ տարի առաջ նշանակված վարչապետ Սերժ Սարգսյանի թեկնածությանը:

Երկու թեկնածուներ՝ Ժառանգություն կուսակցությունից Բաճեհի Հովհաննիսյանը և Նոր Ժամանակներ կուսակցությունից Արամ Կարապետյանը չկարողացան գրանցվել, որովհետև ոստիկանությունը հրաժարվեց հաստատել նրանց՝ վերջին տասը տարիների ընթացքում Հայաստանում բնակվելու փաստը:

2008թ.-ի ընտրությունների դիտորդությունն իրականացվել է ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի, ԵԱՀԿ ԽԱ-ի, ԵԽԽՎ-ի և Եվրոպական խորհրդարանի համատեղ ջանքերով: ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը զեկուցել է.

*«Թեև 2008 թվականի նախագահական ընտրությունները հիմնականում համապատասխանել են ԵԱՀԿ պարտավորություններին և միջազգային չափանիշներին նախընտրական շրջանում և քվեարկության ժամերին՝ որոշ պարտավորությունների նկատմամբ ի հայտ եկան լուրջ մարտահրավերներ՝ հատկապես ընտրությունների օրվանից հետո: Սա ժողովրդավարական ընտրությունների համար էական չափանիշների նկատմամբ ցուցաբերեց անբավարար հարգանք, և արժեզրկեց ամբողջ ընտրական գործընթացը: Մասնավորապես, քվեների հաշվարկում ի հայտ եկան հաշվետվության և թափանցիկության թերություններ, իսկ բողոքների և բողոքարկման ընթացակարգերը լիովին արդյունավետ չէին»:<sup>19</sup>*

Նախընտրական քարոզարշավի ընթացքում տեղական և միջազգային դիտորդները արձանագրել են վարչական ռեսուրսների չարաչափման բազմաթիվ դեպքեր: Ըստ դիտորդների՝ 2008թ.-ի ընտրական գործընթացների թերությունները պայմանավորված էին իրավական դրույթների արդյունավետ իրականացման քաղաքական կամքի բացակայությամբ, թեև իրավական դաշտը ընտրական իրավունքի, քարոզարշավի իրականացման և բողոքների ընթացակարգերի առումով նույնպես բարելավման կարիք ուներ: Թեկնածուների գրանցման հետ կապված հիմնական փոփոխությունը ստորագրությունների պահանջի վերացումն էր. նախագահի թեկնածուներից պահանջվում էր միայն վճարել ընտրական գրավը՝ 8 միլիոն դրամի չափով (2008թ.-ին միջին աշխատավարձը 87,406 դրամ էր):<sup>20</sup>

ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի առաքելությունը չի նշել, որ Րաֆֆի Յովհաննիսյանին և Արամ Կարապետյանին մերժել էին հաստատել նրանց տաս տարվա մշտական բնակության փաստը, մինչդեռ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը գրանցվել և երկու անգամ ընտրվել էր բնակության գրանցման՝ ակնհայտորեն կեղծված տեղեկանքով:

Պետական և ՏԻ պաշտոնյաները, պետական կառույցների աշխատակիցները (համալսարաններ, դպրոցներ, հիվանդանոցներ և այլն) զանգվածաբար մասնակցում էին վարչապետ Սերժ Սարգսյանի քարոզարշավին:

*«ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ դիտորդները զեկուցել են պետական աշխատակիցների և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաների կողմից վարչապետ Սարգսյանի հանդեպ ցուցաբերած, կողմնակալության բազմաթիվ օրինակների մասին: Քարոզարշավի միջոցառումներից մեկի ժամանակ նրանք տեսել են, թե ինչպես է համազգեստ կրող ոստիկանը Յանրապետական կուսակցության դրոշներ բաժանում, իսկ այլ դեպքերում, թե ինչպես է նրա ոստիկանական էսկորտը նման դրոշներ կրում: Յանրային սեկտորի և տեղական ինքնակառավարման մարմինների բազմաթիվ աշխատակիցներ, հատկապես դպրոցների ուսուցիչներ, մասնակցել են վարչապետ Սարգսյանի հանրահավաքներին՝ հաճախ աշխատանքային ժամերի ընթացքում: Նրա քարոզչական նյութերը փակցված են եղել հանրային սեփականություն հանդիսացող շինությունների մեջ և վրա, այդ թվում նաև Երեւանի և ութ մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների շինությունները»:*

Քարոզարշավի ծախսերի հարցը շարունակում էր խնդրահարույց մնալ: Քարոզարշավի բազմաթիվ ծախսեր մնում էին չփաստաթղթավորված և նույնիսկ նրանք, որոնք պատշաճ ներկայացվում էին, չէին ստուգվում: Մասնավոր և հանրային լրատվամիջոցները նկատելիորեն կողմակալ էին՝ ի նպաստ վարչապետի, մեկնաբանում էին նրա բոլոր պաշտոնական այցելությունները և շատ ավելի շատ ժամանակ էին տրամադրում նրա գործունեության լուսաբանմանը:

<sup>19</sup> Հայաստանի Յանրապետություն, Նախագահի ընտրություններ 19 փետրվարի 2008, ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության զեկույց, <http://www.osce.org/hy/odihr/elections/armenia/32115?download=true>  
<sup>20</sup> Աշխատավարձ, աշխատուժի գին, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, [http://www.armstat.am/file/article/trud\\_09\\_5.pdf](http://www.armstat.am/file/article/trud_09_5.pdf)

Քվեարկության օրը տեղի ունեցած խախտումները ներառում էին ընտրողների նկատմամբ ճնշումները, ընտրատեղամասերում կուտակումները, կողմնակի անձանց հաճախակի ներկայությունն ընտրատեղամասերում, ներառյալ՝ ոստիկանության և ՏԻ պաշտոնյաների, վստահված անձանց անհարկի միջամտությունները, ընտրողների տեղափոխումը, որը հիմնականում կապվում էր ընտրակաշառքի հետ: Արդյունքների հաշվարկը և ամփոփումը աչքի ընկան խախտումներով և թափանցիկության բացակայությամբ: Փետրվարի 20-ին թեկնածուների պահանջած վերահաշվարկները բացահայտեցին ձայների հաշվարկի բազմաթիվ անհամապատասխանություններ և սխալներ, ինչն ընտրական հանձնաժողովների քաղաքական կողմնակալության ցուցանիշ էր:

*«ՏԸՀ պաշտոնական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ՏԸՀ-ներում, որոնցում մասնակցությունը միջինից բարձր է եղել, նաեւ վարչապետ Սարգսյանի օգտին քվեների տոկոսն է եղել ավելի բարձր: Նույնիսկ հաշվի առնելով Սերժ Սարգսյանի սերտ ընտանեկան կապերը Գորիսի շրջանում (թիվ 37 ԸԸՀ), չորս ՏԸՀ-ների արդյունքներն ապշեցուցիչ են, այն պատճառով, որ այդտեղ նա ստացել է քվեների ավելի քան 99 տոկոսը, ընտրողների մասնակցությունը եղել է 97-99.5 տոկոս»:*

Նախընտրական և հետընտրական շրջանում ԿԸՀ-ն բողոքների և դիմումների քննման ընթացքում թափանցիկ չէր աշխատում, ընդհանուր առմամբ իշխանություններն ընտրախախտումների համար անպատժելիության արդյունավետ վերացման կամք չէին դրսևորում: Սերժ Սարգսյանը ձայների 52,8 տոկոսով հայտարարվեց ընտրությունների հաղթող, չնայած քվեարկության արդյունքները չընդունվեցին Լևոն Տեր-Պետրոսյանին (21,5 տոկոս) սատարողների կողմից, ովքեր զանգվածային ցույցեր սկսեցին Երևան քաղաքում: Ցույցերը շարունակվեցին մինչև մարտի 1-ը, երբ դրանք բռնի ուժով ցրվեցին ոստիկանության և անվտանգության ուժերի կողմից, որի արդյունքում առնվազն 10 մարդ զոհվեց, 130-ը վիրավորվեցին, իսկ 106-ը կալանավորվեցին և ձերբակալվեցին: Դեռևս գործող նախահազը 20 օրով արտակարգ դրություն հայտարարեց Երևան քաղաքում՝ արգելելով հավաքները և ցույցերը: Ցույցերի և արտակարգ դրության ընթացքում հանրային տրանսպորտով Երևան ճամփորդելը սահմանափակված էր: Վարչապետ Սերժ Սարգսյանի երդմնակալությունը տեղի ունեցավ 2008թ.-ի ապրիլի 9-ին՝ ոստիկանական ուժերի ուժեղ հսկողության պայմաններում:

2012թ.-ի խորհրդարանական ընտրությունների նախօրեին որոշ զարգացումներ եղան, որոնք ինչ-որ չափով ցրեցին ներքին քաղաքական լարվածությունը և քաղաքական միջավայրի բարելավման համար լավ հիմք հանդիսացան: Մասնավորապես, քաղաքական առաջնորդները և ակտիվիստները, ովքեր ձերբակալվել էին 2008թ.-ի հետընտրական բախումների ընթացքում, ազատ արձակվեցին, և մինչև 2011թ.-ի կեսերը ազատ հավաքների իրավունքը, որը 2003-2004թթ սկսած պարբերաբար սահմանափակվել էր Հայաստանում, վերահաստատվեց<sup>21</sup>:

**2012թ.-ի խորհրդարանական ընտրություններ.** 2012թ.-ի մայիսին կայացան ՀՀ Ազգային ժողովի ընտրությունները (131 պատգամավոր. 90 համամասնական և 41 մեծամասնական ընտրական համակարգով): Ձևավորվեցին «Հայաստանի հանրապետական կուսակցություն» խմբակցությունը (69 պատգամավոր), «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը (37 պատգամավոր), «Հայ Ազգային Կոնգրես» խմբակցությունը (7 պատգամավոր), «Օրինաց երկիր» խմբակցությունը (6 պատգամավոր), «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցությունը (5 պատգամավոր), «Ժառանգություն» խմբակցությունը (5 պատգամավոր): 2 պատգամավոր ոչ մի խմբակցությունում չընդգրկվեց:

Ընտրությունները կայացան 2011թ.-ի նոր Ընտրական օրենսգրքի համաձայն, որը բավականանին լավն էր նախկին օրենսգրքի համեմատ, սակայն այն չէր ապահովում

թեկնածուների նախընտրական քարոզչության հավասարությունը և ընտրողների պաշտպանությունը ճշունեմներից: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ևս մի շարք մտահոգություններ ուներ նոր օրենքի մի շարք դրույթների վերաբերյալ, մասնավորապես, նախկին օրենսդրությունը նախատեսում էր, որ դիտորդներն ու լրագրողները չէին կարող պատասխանատվության ենթարկվել ընտրական գործընթացների վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտելու համար, մինչդեռ նոր օրենսգրքից այս դրույթը հանվել էր: Օրենսգիրքը բոլոր դիտորդներին պարտադրում էր դիտորդություն իրականացնելու համար որակավորման վկայական ստանալու համար հանձնել համապատասխան ստուգարք:

Խորհրդարանական ընտրությունները դիտարկվել են բազմաթիվ տեղական դիտորդական առաքելությունների և ԸՄԴԱ-ների կողմից:

Ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության, ԵԱՀԿ Խորհրդարանական ասամբլեայի, ԵԽԽՎ-ի և Եվրոպական խորհրդարանի՝

*«Ընտրությունները, որոնք անցկացվեցին բարեփոխված իրավական դաշտի ներքո, բնորոշվեցին մրցակցային, ակտիվ և հիմնականում խաղաղ նախընտրական քարոզչությամբ, ինչը, սակայն, ընդգծվեց գործընթացների ամբողջականության նկատմամբ վստահության ցածր մակարդակով: Ընտրությունների մասնակիցների կողմից նախընտրական քարոզչության դրույթների որոշ խախտումներ, այդ թվում, վարչական միջոցների օգտագործումը և ընտրողների ընտրության ազատությունը սահմանափակելու փորձերը ստեղծել էին անհավասար մրցակցային դաշտ և հակասում էին ԵԱՀԿ պարտավորություններին: Մինչև քվեարկության օրը ընտրական գործընթացները կազմակերպվել են ընդհանուր առմամբ պրոֆեսիոնալ և թափանցիկ եղանակով: Քվեարկության օրը հիմնականում հանգիստ և խաղաղ էր, թեպետ արձանագրվել էին կազմակերպչական խնդիրներ և գործընթացին անհարկի միջամտություններ՝ հիմնականում կուսակցությունների ներկայացուցիչների կողմից: Մտահոգության տեղիք էր տվել դիմումների և բողոքների քննության գործընթացում առկա բացթողումները»<sup>22</sup>*

Ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի՝ մրցակիցները կասկածներ էին հայտնում ընտրացուցակների ճշգրտության և որակի, ինչպես նաև վարչական ռեսուրսների չարաչափման և ընտրակաշառքի վերաբերյալ: Ընտրացուցակների և հատկապես արտասահմանում բնակվող ընտրողների գրանցման հնարավոր չարաչափումը վերացնելու նպատակով, 28 պատգամավորներ վիճարկեցին Ընտրական օրենսգրքի՝ ստորագրված ընտրացուցակների հրապարակումն արգելող դրույթի սահմանադրականությունը: 2012թ.-ի մայիսի 5-ին Սահմանադրական դատարանը որոշեց, որ սույն դրույթը համապատասխանում է սահմանադրությանը, սակայն չբացառեց ընտրողների իրավունքների պաշտպանության համար ընտրացուցակների հասանելիությունը: Սահմանադրական դատարանը հղում էր կատարում Վենետիկի հանձնաժողովի՝ քվեարկության գաղտնիության սկզբունքին:<sup>23</sup>

Ինչևէ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գտնում է, որ քվեարկության գաղտնիությունը վերաբերում է այն բանին, թե ում օգտին է քվեարկությունը կատարվել, այլ ոչ թե քվեարկելու փաստին: Ակնհայտ է նաև, որ ստորագրված ընտրացուցակների բացահայտումը համաչափ միջոց է դրանց չարաչափումը կանխելու համար<sup>24</sup>: Ավելին, անձնագրերը կնիքելն արդեն իսկ ակնհայտ

<sup>22</sup> Հայաստանի Հանրապետություն, Խորհրդարանական ընտրություններ, 6 մայիսի 2012, Վերջնական հաշվետվություն, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, <http://www.osce.org/hy/odhr/elections/91962?download=true>

<sup>23</sup> Սահմանադրական դատարանը մերժեց ԲՀԿ-ի, ՀԱԿ-ի եւ ՀՅԴ-ի նախաձեռնած հայցադիմումը, Ազատություն, 5 մայիսի, 2012 թ.

<http://www.azatutyun.am/archive/news/20120505/2031/2031.html?id=24570951>

<sup>24</sup> 2012 թ. Մայիսի 6-ի Խորհրդարանական ընտրությունների դիտորդական առաքելության զեկույց, ՀՔԱ Վանաձորի գրասենյակ

<http://hcav.am/wp-content/uploads/2012/06/Election-observation-report-06.05.2012.pdf>

Է դարձնում քվեարկության փաստը, և քվեարկության գաղտնիության փաստարկն անհիմն է դառնում:

Կանանց մասնակցությունը խրախուսելու համար պահանջվում էր, որ երկու սեռերն էլ ներկայացված լինեին համամասնական ցուցակների յուրաքանչյուր հինգ թեկնածուի մեջ: Այնուամենայնիվ, ընտրված թեկնածուի փոխարինման դեպքում սեռը պահպանելու պահանջ չկար:

Ըստ նոր Ընտրական օրենսգրքի՝ ԿԸՀ-ի անդամները նշանակվում են նախագահի կողմից՝ երեքը Մարդու իրավունքների պաշտպանի, երկուսը Փաստաբանների պալատի նախագահի, և երկուսը Վճռաբեկ դատարանի նախագահի առաջադրմամբ: ԸԸՀ-ները մշտապես գործող մարմիններ են, որոնց անդամները նշանակվում են ԿԸՀ-ի կողմից այն քաղաքացիների թվից, ովքեր դիմում են անդամության համար:

ՏԸՀ-ները ժամանակավոր մարմիններ են, որոնք կազմված են համապատասխան ԸԸՀ-ի կողմից նշանակված 2 անդամներից և Ազգային ժողովում ներկայացված յուրաքանչյուր կուսակցությունից նշանակվող 5 անդամներից: Ըստ նոր օրենսգրքի՝ ՏԸՀ-ի անդամները պարտավոր են հանձնել ԿԸՀ-ի կողմից անցկացվող ստուգարքը և ստանալ ԿԸՀ-ի որակավորման վկայական:

Այս ընտրությունների ընթացքում ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի բազմաթիվ դիտորդներ բարձրացրել են ընտրակաշառքի խնդիրը՝ որպես տարածված հիմնախնդիր: Մյուս մեծ խնդիրը բողոքների անարդյունավետ քննությունն էր:

Ըստ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի դիտարկման.

*«Նոր Ընտրական օրենսգրքի դրական հատկանիշներից է այն պահանջը, որ ընտրական հաճնաժողովների կողմից բողոքների քննարկման ժամանակ պետք է իրականացվի պատշաճ վարչական վարույթ: Ինչևէ, Ընտրական օրենսգրքն անհիմն սահմանափակում է բողոք ներկայացնելու նրանց իրավունքը, ում անձնական ընտրական իրավունքները վտանգված են, ըստ էության, մերժելով ընտրողի՝ հիմնական ընտրական իրավունքների խախտման համար դատական պաշտպանություն ստանալու իրավունքը: Ի լրումն, ընտրական իրավունքների վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումները բողոքարկման ենթակա չեն՝ էլ ավելի սահմանափակելով արդյունավետ իրավական փոխհատուցում ստանալու հնարավորությունը: Ավելին, դիմումների և բողոքների վերաբերյալ իրավական դաշտը անհիմն խրթին է»:*

Օրինակ, ԿԸՀ-ն մերժել է դիտարկել բողոքների 95 տոկոսն այն հիմնավորմամբ, որ անհատներն իրավունք չունեն նման բողոքներ ներկայացնել: ԿԸՀ-ն դիտարկել է միայն մի քանի բողոք և որևէ խախտում չի հայտնաբերել, մյուսները մերժվել են տեխնիկական հիմքերով՝ առանց քննության: Քվեարկության օրը տեղի ունեցած խախտումներից էին՝ խմբակային քվեարկությունը, կողմնակի անձանց ներկայությունը տեղամասերում, քվեարկության գաղտնիության խախտումը, բազմակի քվեարկությունը, ընտրակաշառքները, ընտրացուցակների անճշտությունները, դիտորդների, վստահված անձանց և լրագրողների իրավունքների խախտումը, կարուսելները և քվեատուփերի լցոնումը: Անձնագրերը կնիքելու համար նախատեսված հատուկ թանաքը, որը պետք է 12 ժամ մնար անձնագրում, շատ ավելի վաղ էր ցնդում: Մի շարք տեղական դիտորդներ արձանագրել են, որ վարչական ռեսուրսների համատարած չարաշահումները, իշխող Հանրապետական կուսակցության նախընտրական հավաքներին պետական աջխատողների հարկադիր մասնակցությունը, ընտրողների նկատմամբ ճնշումները, մի քանի կուսակցությունների կողմից ընտրակաշառքների տրամադրումը, ներառյալ «բնամթերքով» աջակցությունն ու բարեգործական



գործողությունները հիմք էին 2012թ.-ի խորհրդարանական ընտրությունները ոչ արդար և ոչ ժողովրդավար համարելու համար:

**2013թ.-ի նախագահական ընտրություններ.** Վերջին նախագահական ընտրությունները կայացան 2013թ.-ի փետրվարի 18-ին: 2013թ.-ի նախագահական ընտրությունները կրկին չհամապատասխանեցին ժողովրդավարական չափանիշներին, քանի որ դրանք աչքի ընկան իրական մրցակցության պակասով, քարոզարշավի ողջ ընթացքում վարչական ռեսուրսների լայնածավալ օգտագործմամբ, ձայների հաշվարկի ընթացքում մի շարք խախտումներով, և այլ բացասական գործոններով, որոնք հանգեցրեցին Հայաստանի հանրության ցածր վստահությանը ընտրությունների պաշտոնական արդյունքների նկատմամբ ցածր վստահությանը:

Քաղաքական համատեքստը, որում կայացան ընտրությունները, կարելի է նկարագրել որպես համեմատաբար ավելի հանգիստ, քան նախորդ նախագահական ընտրությունները: Ներքին քաղաքական լարվածությունը, որն առաջացել էր 2008թ.-ի վիճելի ընտրություններից և հետընտրական ցույցերից հետո, համեմատաբար թուլացել էր մինչ 2012թ.-ը և կարող էր թվալ, թե արդեն քաղաքական միջավայրը բարելավվելու համար հիմքեր են ստեղծվել: Սակայն, այս հնարավորությունները հիմնականում չօգտագործվեցին: 2008թ.-ի մարտի 1-2-ին 10 մարդկանց սպանության գործի հետաքննությունը չչարունակվեց: Ընդհանուր առմամբ, պատշաճ քաղաքական գնահատական չի տրվել 2008թ.-ի մարտի 1-ի ողբերգությանը կամ մարտի 1-ի իրադարձություններին հաջորդող իրավունքների սահմանափակումներին:

Ընդդիմության և իշխանության պայքարի անհավասար մրցակցության պատճառով, մի քանի կարևոր ընդդիմադիր կուսակցություններ 2013թ.-ին պարզապես հրաժարվեցին մասնակցել նախագահական ընտրություններին, այդպիսով՝ Հայաստանի քաղաքացիներին զրկելով իմաստալից ընտրություն կատարելու հնարավորությունից: Խորհրդարանի քաղաքական վեց ուժերից երեքը, ներառյալ երկրորդ, երրորդ և չորրորդ ամենամեծ խմբակցությունները, ոչ միայն չառաջադրեցին իրենց թեկնածուներին, այլև չաջակցեցին ոչ մի թեկնածուի:

Վարչական ռեսուրսները ամբողջովին կիրառվում էին գործող նախագահ Սերժ Սարգսյանի օգտին, ներառյալ պետական կառույցները, հատկապես պետական կրթական հաստատությունները, որտեղ քարոզարշավի իրականացումն արգելվում է օրենքով: Գործող նախագահի օգտին ընտրակաշառքների տրամադրման և ուժնափակված ընտրացուցակների անճշտությունների վերաբերյալ մտահոգությունները հանգեցրեցին ընտրությունների նկատմամբ վստահության հետագա նվազմանը:

Ընտրական օրենսդրությունում վերջին տարիներին կատարված փոփոխությունները նշանակալիորեն բարելավեցին ընտրությունների վարչարարության որակը, սակայն զուգահեռաբար օրենքի շրջանցման ավելի հղկված մեթոդներ մշակվեցին:

Նոր ընտրական օրենսգրքի նախագծման փուլում ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից ներկայացված որոշ առաջարկություններ հաշվի են առնվել, սակայն որոշ հանձնարարականներ պատշաճ չեն ընդգրկվել, ներառյալ՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց ընտրելու իրավունքի հնարավորության սահմանումը, ընտրատեղամասերում ընտրողների թվի նվազեցումը, նվիրատվությունների թափանցիկության ապահովումը, ինչպես նաև ԿԸՀ-ի և ԸԸՅ-ների կողմից խախտումների վերաբերյալ իրավապահ մարմիններին տեղեկացնելու պարտավորության սահմանումը:

Ինչպես նաև պատշաճ հաշվի չէին առնվել հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի ավելի ներառական և բազմազան կազմ ապահովելու, լիցենզավորման գործընթացում տարբեր շահերի ներառման և ֆինանսավորման թափանցիկության առումով

«Ջեռուստատեսության և ռադիոյի» մասին օրենքի փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունները:

2012թ.-ի խորհրդարանական ընտրություններից հետո ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից տրված հանձնարարականները ընդհանրապես չէին իրականացվել, չնայած առաջարկվել էր դրանց անդրադառնալ մինչ 2013թ.-ի նախագահական ընտրությունները: Դրանք հիմնականում վերաբերում էին բողոքների և դիմումների արդյունավետ քննությանը, վարչական ռեսուրսների չարաշահման փաստերով քրեական հետապնդմանը, ընտրակաշառքի վերաբերյալ բողոքների ներկայացմանը և ընտրացուցակների ստուգմանը:

Հայաստանից դուրս բնակվող քաղաքացիները դեռևս օրենքով գրկված էին ընտրությանը մասնակցելու հնարավորությունից, չնայած, որ հատուկ պայմաններ էին ստեղծվել սահմանափակ խմբի՝ Հայաստանի դիվանագիտական և հյուպատոսական առաքելությունների և Հայաստանում գրանցված կորպորացիաների արտասահմանյան մասնաճյուղերի աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների համար:

Տեղամասային կենտրոնների մեծ մասը հարմարեցված չէին անվասայլակների համար: Անկողնային հիվանդները և ծերերը, ովքեր անկարող էին հասնել ընտատեղամաս, գրկված էին իրենց սահմանադրական իրավունքն իրականացնելու հնարավորությունից:

Խուլ և համր քաղաքացիների համար նախընտրական ծրագրերի և քարոզչական նյութերի թարգամությունը նշանների լեզվով հասանելի չէր: Մի շարք ընտրատեղամասերում տեսողության խնդիր ունեցող մարդկանց չէն ապահովվել համապատասխան կադապարներով:

Առաջատար թեկնածուներն էին Հանրապետական կուսակցության կողմից ներկայացված գործող նախագահ Սերժ Սարգսյանը, և Ազգային ժողովում ներկայացված ժառանգություն կուսակցության նախագահ, ինքնառաջադրված թեկնածու Բաճակի Հովհաննիսյանը:

Նախընտրական շրջանում մահափորձ կատարվեց Ազգային Ինքնորոշում Միավորման առաջնորդ՝ նախագահի թեկնածու Պարույր Հայրիկյանի նկատմամբ: Սա կարող էր հետաձգել ընտրությունների օրը, սակայն Պարույր Հայրիկյանը որոշեց չդիմել Սահմանադրական դատարան՝ ընտրությունների օրը հետաձգելու խնդրանքով:

Նախագահի թեկնածու Անդրեաս Դուկասյանը հացադուլ հայտարարեց քարոզչության ողջ ընթացքում՝ պահանջելով չեղյալ հայտարարել Սերժ Սարգսյանի թեկնածությունը՝ նրան սատարող Հանրապետական կուսակցության կատարած բռնությունների և խախտումների պատճառով:

Նախընտրական քարոզարշավի ընթացքում գործող նախագահ և նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի մեկնարկային առավելությունը մյուս թեկնածուների նկատմամբ ակնհայտ էր նախընտրական շտաբերի, ներգրավված մարդկային ռեսուրսների, քարոզարշակական գործողությունների իրականացման համար տարածքների վարձակալության, շտաբերի աշխատողների վարձատրության չափերի, ինչպես նաև տրանսպորտային միջոցների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման առումով:

Չնայած նախընտրական քարոզարշավի փուլը համեմատաբար հավասարաչափ էր լուսաբանված, հետընտրական զարգացումները պատշաճ չէին լուսաբանվում և հանրությունը տեղեկացված չէր թեկնածուների և նրանց քաղաքական կուսակցությունների գործողությունների վերաբերյալ: Որպես կանոն, ՀՀ ԿԸՀ-ն, ԸԸՀ-ները և իրավապահ մարմինները միայն ձևական միջոցառումներ են ձեռնարկել ընտրախախտումների հաղորդումների վերաբերյալ, և այս քայլերն ըստ էության ուղղված էին դրանց ժխտմանը, քան պատշաճ քննությանը և պատասխանատվության ենթարկելուն:

Մի շարք տեղական դիտորդական կազմակերպություններ արձանագրել են ընտրատեղամասերի շրջակայքում կուտակումների և ընտրողների զանգվածային փոխադրումների մասին: Արձանագրվել են ընտրակաշառքի բաժանում, ընտրատեղամասում կողմնակի անձանց ներկայություն, քվեարկության գաղտնիության խախտում, բազմակի քվեարկություն, անձնագրի վրայից կնիքի արագ անհետացում, լցումներ, ինչպես նաև խախտումների վերաբերյալ ընտրական հանձնաժողովների և իրավապահ մարմինների անգործություն:

Քվեարկության ընթացքում հանձնաժողովները փաստացի դրսևորում էին միակուսակցական վարքագիծ. թե իրավապահ մարմինները, թե ընտրական հանձնաժողովները նախաձեռնողականություն չէին ցուցաբերում խախտումները կանխարգելելու ուղղությամբ՝ առանց վստահված անձանց կամ դիտորդների նկատառումների: Մի շարք ընտրատեղամասերում հանձնաժողովների անդամները ակտիվորեն հարցնում էին քաղաքացիներին իրենց քվեարկության վերաբերյալ և ապահովում էին քաղաքացիների մասնակցությունը՝ համակարգելով հեռախոսզանգերի միջոցով:

Դիտարկված ընտրատեղամասերում արդյունքներն էականորեն տարբերվում էին չդիտարկված ընտրատեղամասերի արդյունքներից: Տարբերությունն ակնհայտ էր նաև ընտրողների մասնակցության առումով: Օրինակ, ՀԲԱ Վանաձորի գրասենյակի կողմից դիտարկված Լոռի և Տավուշ մարզերի քաղաքային և գյուղական համայնքների ընտրատեղամասերում Սերժ Սարգսյան Րաֆֆի Հովհաննիսյան ձայների հարաբերակցությունը 48.4% և 47.0% էր, մինչդեռ այն ընտրատեղամասերում, որտեղ դիտորդություն չէր իրականացվել, այդ հարաբերակցությունը համապատասխանաբար 57.7 % և 37.7 % էր:

Մի շարք կազմակերպությունների և անկախ փորձագետների կողմից արձանագրվել է մի տարօրինակ օրինաչափություն, ըստ որի Սերժ Սարգսյանի առավելությունը ակնհայտ էր այն տեղամասերում, որտեղ քվեարկողների թիվը ավելի մեծ էր, մինչդեռ Րաֆֆի Հովհաննիսյանը առավելություն ուներ այն տեղամասերում, որտեղ ավելի համաչափ մասնակցություն էր եղել: Բազմաթիվ փորձագետների պնդմամբ, այս փաստը վկայում է զանգվածային լցումների և մասնակցիների թվի ուժեղացման մասին: Քվեարկության արդյունքները հաստատում են, որ Սերժ Սարգսյանը չէր հաղթել գոնե առաջին փուլում, և ընտրության արդյունքները կեղծվել էին: 90% մասնակցություն ապահոված 49 տեղամասերում արդյունքները ցույց են տվել, որ Րաֆֆի Հովհաննիսյանը միջինը ստացել է ձայների 6,8 %-ը, իսկ Սերժ Սարգսյանը՝ 92%-ը, որը մեծապես տարբերվում է հանրապետության միջին ցուցանիշից:<sup>25</sup>

ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ից, ԵԽԽՎ-ից, ԵԽ-ից կազմված միացյալ միջազգային դիտորդական առաքելության նախնական հայտարարությամբ նախագահական ընտրությունները ընդհանուր առմամբ գնահատվում էին որպես լավ կազմակերպված և այդ ընտրություններին բնորոշ էին հիմնարար ազատությունները, ներառյալ հավաքների և արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանությունը<sup>26</sup>: Տեղական դիտորդները կարծում էին, որ համատարած ընտրակաշառքները, ընտրողների նկատմամբ ճնշումները, վարչական ռեսուրսների չարաշահումները, ինչպես նաև հաշվարկման կեղծումները, չէին կարող համարվել պատշաճ ընտրություն, և ԸՄԴԱ-ի հայտարարությունը խրախուսում էր ընտրակեղծիքները և ընտրախախտումների անպատժելիությունը, և տեղական դիտորդների նկատառումները պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեին: Այս գնահատման վերաբերյալ իրենց բողոքն արտահայտելու և տեղական դիտորդների բացահայտումները ներկայացնելու նպատակով, մի

<sup>25</sup>Report of the Armenian national platform of EAP CSF Presidential elections in Armenia in 2013 <http://eap-csf.eu/assets/files/Documents/ANP%20report%20on%20elections%202013.pdf>

<sup>26</sup> Ընտրությունների միջազգային դիտարկում, Հայաստանի հանրապետություն նախագահի ընտրություններ, հայտարարություն, Նախնական հանգամանքների եվ եզրակացությունների վերաբերյալ, 19 փետրվարի, 2013 թ. <http://www.osce.org/hy/odihr/elections/99677?download=true>

խումբ քաղաքացիական ակտիվիստներ խանգարեցին ԸՄԴԱ ասուլիսը և ընթերցեցին իրենց սեփական հայտարարությունը՝ ժխտելով ԸՄԴԱ եզրակացությունները<sup>27</sup>:

Կեղծված արդյունքների վերաբերյալ ընդհանուր դժգոհությունը արտահայտվեց զանգվածային ցույցերի և ընդվզումների միջոցով՝ երկրի ողջ տարածքով: Ի տարբերություն 2008թ.-ի ցույցերին, 2013թ.-ի ցույցերը ապակենտրոնացված էին և նվազ համակարգված: Ցույցերը, որ տևեցին մինչև 33 նախագահի պաշտոնական երդմնակալության օրը, բռնությամբ ցրվեցին ոստիկանության կողմից, սակայն բարեբախտաբար՝ առանց զոհերի, ի տարբերություն 2008թ.-ին: Լարվածությունը թուլացվեց Րաֆֆի Յովհաննիսյանի կողմից, ով առճակատումից խուսափելու համար ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի հետ քայլեց Եռաբլուր, որտեղ նրանք երկուսով աղոթեցին: Այս արարքը ընդհանուր առմամբ քննադատության արժանացավ՝ որպես թուլության նշան և վերջակետ դրեց հանրային ցույցերին:

ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի վերջնական զեկույցը Էականորեն փոխել էր ընտրական գործընթացների գնահատումը և ակնհայտորեն հաշվի էր առել տեղական դիտորդների դիտարկումները:<sup>28</sup>

<sup>27</sup> «Ամոթ մեզ, մենք ավելի ցածր կարծիքի էինք մեր հասարակության մասին», Զեռք, <http://hetq.am/arm/news/23679/amot-mez-menq-aveli-catsr-kartsiqi-einq-mer-hasarakutyam-masin.html>

<sup>28</sup> Հայաստանի Հանրապետություն, Նախագահի ընտրություններ 18 փետրվարի 2013, ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության զեկույց, <http://www.osce.org/hy/odihr/elections/armenia/32115?download=true>

## ԸՄԴԱ-ի հանձնարարականների և դրանց իրականացման ամփոփումը

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները (ԸՄԴԱ) Հայաստանյան ընտրությունները դիտարկում են 1996թ.-ից ի վեր, և այս առաքելությունների աջակցությամբ ընտրական օրենսդրությունը և ընտրությունների կազմակերպումը էականորեն բարելավվել են: Առաջին մի քանի ընտրությունների ընթացքում ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի ներկայացրած արձանագրությունների լեզուն նկատելիորեն մեղմացել է այն պահից, ինչ ԸՄԴԱ-ները միավորել են իրենց ուժերը սկսած 2008թ.-ից, երբ ԸՄԴԱ-ների կողմից ներկայացված հանձնարարականները չեն արտացոլել արձանագրված բոլոր խախտումները: Այս անհամապատասխանությունը կարելի է վերագրել այն փաստին, որ ԸՄԴԱ-ները հաճախ շեշտում են, որ պատշաճ օրենսդրական կարգավորումները, թեև կարևոր, բայց բավարար չեն՝ եզրակացնելու, որ ընտրությունները լավ կկազմակերպվեն: Անհրաժեշտ է ընդգծել այն, որ արդար և ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու և ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու հարցում ամենաէական գործոնը իշխանությունների վճռականությունն է: Այնուամենայնիվ, այս զեկույցում գնահատված ԸՄԴԱ հանձնարարականները, բավականին օբյեկտիվորեն են արտացոլում իրավիճակը և դրանց պատշաճ իրականացումը ժողովրդավարական ընտրությունների կազմակերպման կարևորագույն նախադրյալ է:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը վերլուծել է 193 հանձնարարականների իրականացումը (ընդհանուր թվով 336՝ ներառյալ տարիների ընթացքում կրկնվողները), որոնք 2003թ.-ի նախագահական ընտրություններից ի վեր ներկայացվել են ՀՀ իշխանություններին: Հանձնարարականների մոտ 53 %-ը (102) նշված տասը տարիների ընթացքում մի քանի անգամ կրկնվել են (Տես Հավելված. ԸՄԴԱ հանձնարարականների մատրիցա): Հանձնարարականները բաժանվել են 30 թեմատիկ խմբերի:

2003թ.-ի նախագահական ընտրություններից հետո ԸՄԴԱ-ները ներկայացրել են 73 հանձնարարական, իսկ 2003թ.-ի խորհրդարանական ընտրություններից հետո՝ 84 հանձնարարական՝ հիմնականում կրկնելով նախորդ ընտրություններից հետո արված հանձնարարականները: 2007թ.-ի խորհրդարանական ընտրություններից հետո ներկայացվել է 52 հանձնարարական, իսկ 2008թ.-ի նախագահական ընտրություններից հետո՝ 48: 2012թ.-ի խորհրդարանական ընտրություններից հետո ներկայացվել է 40 հանձնարարական, որոնց մեծ մասը կրկնվել է 2013թ.-ի նախագահական ընտրություններից հետո, երբ ընդհանուր թվով 40 հանձնարարական է ներկայացվել (տես Աղյուսակ 1):

Հանձնարարականները գնահատվել են չորս հիմնական չափանիշների հիման վրա.

- Կոնկրետություն - վերաբերում է այն հարցին, թե որքանով է կոնկրետ առաջարկված փոփոխությունը - 190 հանձնարարական
- Արդիականություն - վերաբերում է նրան, թե որքանով է հանձնարարականը արտացոլում բացահայտված խախտումները և տեղական դիտորդների կողմից արձանագրված իրավիճակը - 180 հանձնարարական
- Իրականացվածություն - վերաբերում է նրան, թե արդյոք առաջարկված փոփոխությունը ներառվել է օրենսդրության մեջ կամ իրականացվել է որևէ այլ կերպ - 98 հանձնարարական

- Արդյունավետություն - իրականացված հանձնարարականները գնահատվել են ըստ այն չափանիշի, թե որքանով է դրանց իրականացումը արդյունավետ եղել օրենքի հետագա խախտումների կանխարգելման տեսանկյունից - 41 հանձնարարական

**Մատչելիություն.** Ընդհանուր 4 հանձնարարականներ են ներկայացվել ընտրատեղամասերի մատչելիության վերաբերյալ ԵսեսԿ-ի, ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ և Վենետիկի Հանձնաժողովի կողմից: Հայաստանի կառավարությանը առաջարկվել էր հաշմանդամություն ունեցող մարդկանց համար ընտրատեղամասերը և քվեատուփերը դարձնել հասանելի: Ինչպես նաև առաջարկվել է, որ Նրանք, ովքեր հիվանդանոցում են կամ ֆիզիկապես անկարող են հասնել ընտրատեղամաս, հնարավորություն ունենան օգտվել քվեարկելու իրենց իրավունքից՝ շարժական քվեախցերի կամ այլ միջոցով: 4 հանձնարարականներից իրականացվել է միայն մեկը:


2013թ.-ի նախագահական ընտրությունների դիտորդությունը ցույց տվեց, որ տեղամասային կենտրոնների 85%-ը մատչելի չէին: Ըստ Ունիսոն ՅԿ-ի՝ Երևան քաղաքի ընտրատեղամասերից 31 (6%) -ըն էին լիովին մատչելի անվասայլակով տեղաշարժող ընտրողների համար: Տեղամասային կենտրոններից 44 (9%) -ը գնահատվել են հիմնականում մատչելի, այսինքն սայլակներով մուտքը հնարավոր էր որոշակի աջակցությամբ: Թույլ տեսողությամբ ընտրողների համար ընտրատեղամասերում առկա էին խոշորացնող կաղապարներ: Շարժական քվեատուփերը վերագործարկվել են հիվանդանոցում գտնվող անձանց, ձերբակալվածների և ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում գտնվող ձերբակալվածների համար, մինչդեռ այն մարդիկ, ովքեր անկողնային էին կամ ֆիզիկապես անկարող՝ հասնելու ընտրատեղամաս, հնարավորություն չեն ունեցել քվեարկելու:

ԿԸՀ-ն որոշում կայացրեց, որ ՏԸՀ-ները դուրս բերեն ընտրացուցակները և շարժական քվեատուփը, որպեսզի հենաշարժողական խնդիրներով ընտրողները քվեարկեն տեղամասային կենտրոնից դուրս, եթե շենքը մատչելի չէ: Այս կարգավորումը, սակայն, հանձնարարականի պատշաճ իրականացում չէր: 4 հանձնարարականներից միայն մեկն էր իրականացվել:

**Ընտրական վեճերի լուծում:** ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի կողմից 26 հանձնարարականներ են արվել վեճերի լուծման գործընթացի վերաբերյալ: Հանձնարարականները վերաբերել են բողոքարկման գործընթացի հստակեցումներին, ներառյալ՝ ով և ինչպես կարող է դիմումներ և բողոքներ ներկայացնել, բողոքների պատշաճ քննությանը և հիմնավորված որոշումների կայացմանը, ընտրախախտումներ կատարողների քրեական և/կամ վարչական պատասխանատվության ենթարկելուն: Առաքելությունները ԿԸՀ-ին կոչ են արել ավելի ակտիվ դեր ունենալ բողոքների քննության ընթացքում: Սակայն օրենքով ԿԸՀ-ն պարտավոր չէ բողոքը բովանդակային քննության ենթարկել: Այնուամենայնիվ, բողոքների քննության ընթացակարգը սահմանված է: Ընտրական օրենսգիրքը չի մանրամասնում, թե որ ընտրախախտումներն են քրեական և որոնք են վարչական բնույթի: Խախտումները մանրամասն նկարագրվում են համապատասխան օրենսգրքերում: Տեղական դիտորդները փորձել են բողոքարկել ընտրախախտումները՝ ներառյալ ընտրական հանձնաժողովների անգործությունը: Նրանց դիմումները մերժվել են այն հիմնավորմամբ, որ Նրանք իրավունք ունեն բողոքարկելու միայն իրենց սուբյեկտիվ իրավունքների ոտնահարման դեպքերի վերաբերյալ:

Որպես կանոն, ՀՀ ԿԸՀ-ն, ԸԸՀ-ները և իրավապահ մարմինները միայն ձևական միջոցառումներ են ձեռնարկել ընտրախախտումների հաղորդումների վերաբերյալ, և այս քայլերն ըստ էության ուղղված էին դրանց ժխտմանը, քան պատշաճ քննությանը և պատասխանատվության ենթարկելուն: Ընտրական վեճերի լուծման վերաբերյալ 26 հանձնարարականից իրականացվել է 15-ը, որոնցից 13-ը արդյունավետ են եղել:

**Վարչական կայանք.** Վարչական կայանքի վերաբերյալ 1 հանձնարարական է ներկայացվել 2003թ.-ին, երբ այն օգտագործվել է ընդդիմադիր թեկնածուներից մեկի և Նրա աջակիցներից մի



քանիսի դեմ: ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ-ը պահանջել է, որպեսզի վարչական կալանքի դրույթը հանվի Վարչական դատավարության օրենսգրքից: Այս հանձնարարականն իրականացվել է:

**Քարոզարշավի ֆինանսավորում.** ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից ներկայացվել է 7 հանձնարարական, որոնք պահանջում են քարոզարշավի ֆինանսավորման կարգավորման ավելի լավ դրույթներ, այդ թվում՝ ծախսերի ցանկի ընդլայնում՝ ավելի մանրամասն ներկայացում, հաշվետվության պահանջների և պատշաճ վերահսկման ցուցիչների հստակեցում: 1999թ.-ի ընտրական օրենսգրքով սահմանվում էր, որ կուսակցությունները, որոնք ստացել էին ձայների 25%-ը կարող էին ստանալ նախընտրական ծախսերի 50%-ի չափով փոխհատուցում: Պնդելով, որ այս շեմը հաղթահարելի է միայն հզոր կուսակցությունների համար, ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ-ը առաջարկում էր իջեցնել այն: 2007թ.-ին այս դրույթը ամբողջովին վերացվեց: Տեղական դիտորդները արձանագրեցին, որ որոշ թեկնածուների և կուսակցությունների նախընտրական ծախսերը շատ ավելի մեծ են, քան ներկայացվում են: Քարոզարշավի ծախսերի ցանկը չէր ներառում այնպիսի ծախսեր, ինչպիսիք են անձնակազմի վարձատրությունը, գրասենյակի վարձակալությունը կամ ճանապարհածախսը: Քարոզարշավի ֆինանսական կարգավորումների վերաբերյալ ներկայացված 7 հանձնարարականներից 4-ն իրականացվել են, սակայն դրանցից ոչ մեկը խախտումների կանխարգելման հարցում արդյունավետ չի եղել:

**Թեկնածուների գրանցում.** Թեկնածուների գրանցման գործընթացի վերաբերյալ ներկայացվել է 16 հանձնարարական, այդ թվում գրանցման համար պահանջվող ստորագրությունների քանակի, թեկնածուների գրանցումը չեղյալ հայտարարելու կարգի վերաբերյալ: Ստորագրություններ ներկայացնելու պահանջը վերացվեց 2003թ.-ին: ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ-ը Առաքելությունը ադրադարձավ թեկնածուների գրանցումը չեղյալ դարձնելու կարգավորմանը թեկնածուների պարտադրված հրաժարականից խուսափելու համար: Անհատների և կուսակցությունների թեկնածության հանման հստակ չափանիշներ են սահմանված, սակայն ինքնաբացարկը չի սահմանափակվում հիմքերի առումով և պարտադրված ինքնաբացարկը բավականին տարածված է հատկապես ՏԻՄ ընտրությունների ընթացքում: 16 հանձնարարականներից 11-ն իրականացվել են և դրանցից 8-ը արդյունավետ են եղել:

**Կենտրոնական ընտրական հանձնաժողով.** ԵԱՅԿ/ԺՅՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը ԿԸՅ վերաբերյալ ներկայացրել են 7 հանձնարարական: Հանձնարարականները անդրադարձել են ԿԸՅ կազմավորմանը, ԿԸՅ լիազորություններին և ԿԸՅ հանդիպումների և որոշումների հրապարակայնությանը: Բոլոր 7 հանձնարարականներն էլ իրականացվել են, սակայն դրանցից միայն երեքի իրականացումն է գնահատվել արդյունավետ:

**Քաղաքացիական դիտորդներ.** Անկուսակցական դիտորդների կողմից դիտորդություն իրականացնելու վերաբերյալ ներկայացվել են 4 հանձնարարականներ: Առաջին հանձնարարականը առաջարկում էր կազմակերպություններին կնիքել դիտորդների վկայականները: Հանձնարարականը կատարվում էր նախորդ օրենսգրքի գործողության ընթացքում: Երկրորդ հանձնարարականով առաջարկվում էր ներդնել ավելի արդյունավետ կարգավորումներ, որոնք կերաշխավորեին, որ տեղական դիտորդները ներգրավված չլինեն միջազգային առաքելություններում և հակառակը:

Այս դրույթը արդյունավետորեն կիրառվում է, սակայն 2013թ.-ին, տեղական կազմակերպություններից Ազատ Հասարակության Ինստիտուտը հայտարարեց, որ իրենք հրավիրել են մի խումբ Բրիտանացի փորձագետների, որպեսզի նրանք դիտորդական առաքելություն իրականացնեն: Սակայն որևէ տեղ արձանագրված չէ, որ նրանք պաշտոնապես

գրանցվել են ԿԸՀ-ի կողմից և հայտնի չէ, թե արդյոք պատվիրակությունը այցելել է տեղամասային կենտրոններ և դիտորդություն է իրականացրել<sup>29</sup>:

Վերջին երկու հանձնարարականները հավանության չէին տալիս նոր օրենսգրքով սահմանված պարտադիր սուուգարքի և մեկ դիտորդի կողմնակալության պատճառով դիտորդական կազմակերպության հեռացման հնարավորությանը: Երկու հանձնարարականներն էլ չեն կատարվել:

Չարկ է նշել, որ Վենետիկի հանձնաժողովը նախկինում պաշտպանում էր դիտորդների ավելի քիչ իրավունքների գաղափարը և մերժում էր քվեարկության ընթացքում դիտորդների միջամտության ցանկացած հնարավորություն: Իր վերջին նկատառումներում Հանձնաժողովը առաջարկում էր դիտորդներին ավելի շատ իրավունքներ ընձեռնել, այդ թվում՝ ընտրական վեճերով ընտրական հանձնաժողովներին և դատարաններին դիմելու իրավունքը, այդ թվում ընտրությունների արդյունքների բողոքարկման հարցով:

Չորս հանձնարարականներից իրականացվել է միայն մեկը:

**Նախընտրական քարոզարշավ.** Նախընտրական քարոզարշավների կարգավորման հետ կապված 5 հանձնարարականներ են ներկայացվել, որոնց թվում՝ քվեարկության օրը և ընտրատեղամասերին մոտ տարածքներում քարոզարշավի իրականացման արգելքը, քարոզարշավի խախտումների և կեղծ գրպարտության տարածման համար պատասխանատվության սահմանումը, ինչպես նաև քարոզարշավի ավարտի ժամանակահատվածի հստակեցումը: Քարոզարշավի խախտումների դեպքում, Վարչական իրավախախտումների մասին ՀՀ Օրենսգիրքը սահմանում է ֆինանսական տուգանք նվազագույն աշխատավարձի 400 – 600ապատիկի չափով, ինչը չի համապատասխանում համաչափության պահանջին: Հինգ հանձնարարականներից իրականացվել է միայն մեկը:

**Ընտրական հանձնաժողովներ.** Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից ներկայացվել է 18 հանձնարարական, որոնք վերաբերում են հանձնաժողովների կողմից ընտրությունների անցկացմանը: Այս հանձնարարականները վերաբերում էին ընտրական հանձնաժողովների կազմին, հանձնաժողովների անդամների հեռացմանը, ընտրական խախտումների համար հանձնաժողովի անդամների պատասխանատվությանը, շարունակական վերապատրաստումներին, որոշումների կայացման թափանցիկությանը, հանձնաժողովի ղեկավար պաշտոնների արդար բաշխմանը, և ԸՀՅ տարածքների առանձնացմանը կենտրոնական և տեղական իշխանության շենքերից:

Ինչ վերաբերում է կազմին, ըստ տեղական դիտորդների, չնայած անդամների թվացյալ բազմակուսակցականությանը, ՏՀՀ-ները հիմնականում ծառայում են իշխող՝ Հանրապետական կուսակցությանը և հակված չեն խախտումների դեպքում որևէ գործողություն ձեռնարկելուն:

Հանձնաժողովի անդամների հեռացման մասին դրույթը ներառում է նրանց փոխաիրնելու հնարավորությունը այն դեպքում, երբ անդամը հանձնաժողովի հանդիպումներից բացակայել է երեք անգամ, ինչը կարող է չարաշահվել, հատկապես անդամի նկատմամբ ճշումներ գործադրելու միջոցով: Չնայած ՏՀՀ գրասենյակի տեղափոխման վերաբերյալ հանձնարարականին, մի շարք ՏՀՀ-ներ տեղակայված են մարզպետարաններում և քաղաքապետարաններում: 18 հանձնարարականներից իրականացվել են տասը, սակայն դրանցից միայն մեկն է արդյունավետ եղել:

**Ընտրական գործընթացների արդարությունը և իրավականություն (Integrity)** ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և ԵԽԽՎ-ն ընտրական գործընթացների արդարության և ընդհանուր

<sup>29</sup> ՀԿ-ներ իշխանության գրպանում. միջազգային դիտորդների միջոց, Սիվիլնեթ, ապրիլի 30, 2013թ. <http://civilinet.am/2013/03/05/հկ-ներ-իշխանության-գրպանում-միջազգայ/#.VcIUdvOqqko>



իրավականության վերաբերյալ յոթ հանձնարարական են ներկայացրել՝ հատկապես շեշտադրելով ժողովրդավարական ընտրությունների անցկացման քաղաքական կամքը: Յոթ հանձնարարականներից ոչ մեկը չի իրականացվել:

**Հանձնարարականների իրականացում.** ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի և ԵԽԽՎ-ի կողմից տրվել է երկու հանձնարարական, որոնք կոչ են անում ՀՀ իշխանությունների կատարել օրենսդրական փոփոխություններ՝ իրականացնելով իրենց կողմից ներկայացրած հանձնարարականները և համագործակցել քաղաքացիական հասարակության ու քաղաքական կուսակցությունների հետ՝ ապահովելու նրանց մասնակցությունը, ինչպես նաև համագործակցել ԵԽԽՎ-ի և Վենետիկի հանձնաժողովի հետ՝ հանձնարարականների իրականացման մոնիթորինգի գործընթացում: Երկու հանձնարարականներից ոչ մեկը չի իրականացվել:

**Սահմանադրական դատարանի որոշումների իրականացում և օրենսդրական համապատասխանություն.** Վենետիկի Հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ երկու հանձնարարականները հասցեգրված են Սահմանադրական դատարանի որոշումների արտացոլմանը ընտրական օրենսգրքում և օրենսդրական անհամապատասխանությունների վերացմանը: Հանձնարարականներից ոչ մեկը չի իրականացվել:

**Լրատվամիջոցներ.** Վենետիկի հանձնաժողովի, ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի և ԵԽԽՎ-ի կողմից 24 հանձնարարական է ներկայացվել լրատվական դաշտի կարգավորման վերաբերյալ, այդ թվում՝ եթերաժամանակի բաշխման, եթերի ժամերի, անկողմնակալ լուսաբանման ապահովման, կարգավորող մարմինների անկախության, արդար արտոնագրման գործընթացին, ինչպես նաև կանանց մասնակցության ավելի լայն լուսաբանմանը:

Բացառությամբ որոշ առցանց լրատվամիջոցների, մի քանի տպագիր մամուլի և մեկ մարզային հեռուստաընկերության, բոլոր լրատվական միջոցները վերահսկվում են իշխանության կողմից: Լրագրողների անկախությունը չի կարող ապահովվել, եթե նրանք ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում անկախ չեն և նրանց նկատմամբ բռնությունները չեն պատժվում: Նախընտրական քարոզարշավների բալանսավորված լուսաբանումը հետևողականորեն չի իրականացվում, և այն մեծապես կախված է ԸՄԴԱ-ի ճշումից: Լրատվամիջոցների վերաբերող և դրանց առնչվող լրացուցիչ կարգավորումներ են սահմանվել մասնավոր լրատվամիջոցների համար, օրինակ՝ ՀՌԱՀ-ի միջոցով: Այնուամենայնիվ, Հանձնաժողովն ինքը կախված է հանրապետության նախագահից, հետևաբար դրա կարգավորող իրավասությունները կարող են չարաշահվել: Լրատվամիջոցների վերաբերյալ 24 հանձնարարականներից իրականացվել են 7, որոնցից միայն մեկն է արդյունավետ եղել:

**Չինված ուժեր.** Չինված ուժերի վերաբերյալ 2 հանձնարարական է ներկայացվել, որոնք վերաբերում են զինվորականների ընտրելու ազատ կամքի իրավունքին և ընտրական գործընթացների ընթացքում նրանց պարտավորություններին:

Չինծառայողների ձայները շարունակվում են չարաշահվել, և հատկապես խնդրահարույց են, քանի որ ընտրացուցակները հրապարակային չեն: Չինծառայողներին ցուցմունք է տրվում աջակցել կառավարությանը: Երկու հանձնարարականներից մեկն իրականացվել էր, սակայն անարդյունավետ:

**Մասնակցություն.** Մեկ հանձնարարական է ներկայացվել մեծամասնական համակարգում մասնակցության խթանման վերաբերյալ: Այնուամենայնիվ, ինչպես նշվեց, ճշումների պատճառով ինքնաբացարկը բավականին տարածված է: Հանձնարարականն իրականացվել է սակայն ոչ արդյունավետորեն:

**Կանանց մասնակցությունը.** ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից ներկայացված հանձնարարականներից 3-ը վերաբերել են քվտաների միջոցով կանանց մասնակցության

խթանմանը: Իրականացվել է միայն նվազագույն քվոտայով թեկնածության հանձնարարականը, սակայն անարդյունավետ: Քանի որ, երբ ընտրված կանայք հանում են իրենց թեկնածությունը, նրանց հիմնականում փոխարինում են տղամարդիկ, սեռի պահպանումը օրենքով չի պահանջվում:

**Ոստիկանություն.** Ոստիկանների վերապատրաստման և քվեարկության օրը ընտրատեղամասերում նրանց պարտականությունների մասին ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից ներկայացվել են երկու հանձնարարական: Մեկ հանձնարարական իրականացվել է 2013թ.-ին, սակայն անարդյունավետ:

**Տեղամասային կենտրոններ.** Տեղամասային կենտրոնների վերաբերյալ ներկայացված երեք հանձնարարականները ուղղված էին կողմնակի անձանց ներկայությանը, թափանցիկ արկղերի կիրառմանը և ընթացքի վերահսկման համար նպատակահարմար ընտրատեղամասի տարածքների տրամադրմանը: Երեք հանձնարարականներն էլ իրականացվել են, սակայն միայն թափանցիկ արկղերի օգտագործումն է արդյունավետ:

**Խախտումների կանխարգելում.** Մեկ հանձնարարական ներկայացվել է խախտումների կանխարգելման և դրանց դեպքում ի սկզբանե քայլերի ձեռնարկման վերաբերյալ: Հանձնարարականը չի իրականացվել:

**Վստահված անձինք.** ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ը և ԵԽԽՎ-ն վստահված անձանց վերաբերյալ երկու հանձնարարական են ներկայացրել: Ըստ հանձնարարականների՝ պետք է կարգավորվեր ընտրական հանձնաժողովի աշխատանքներին վստահված անձանց անպատեհ միջամտելու հարցը, ինչպես նաև նրանց վերապատրաստման համար ձեռնարկների մշակման հարցը: Ձեռնարկը մշակվել է, սակայն այն բավականաչափ քանակությամբ չի տպագրվել: Հատկապես իշխող կուսակցության կամ գործող թեկնածուի վստահված անձանց կողմից անհարկի միջամտության հարցը արձանագրվել է տեղական դիտորդների կողմից, սակայն որևէ գործողություն չի իրականացվել: Հանձնարարականներից իրականացվել է մեկը և արդյունավետ:

**Արդյունքների հրապարակում.** ԵԽԽՎ-ն, Վենետիկի Հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳը հինգ հանձնարարականներ են ներկայացրել արդյունքների հրապարակման վերաբերյալ: Այս հանձնարարականները ներառում էին՝ ընտրության արդյունքները փակցնել ընտրատեղամասերում, արդյունքները հրապարակել ըստ ընտրատարածքների և ժամանակին կազմել արձանագրությունները: Բոլոր հինգ հանձնարարականներն իրականացվել են անարդյունավետորեն:

**Խախտումների արձանագրումը.** Խախտումների արձանագրման տեսանկյունից Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳը առաջարկել են, որպեսզի քվեարկության ընթացքի խախտումները գրանցամատյանում արձանագրվեն ըստ հանձնաժողովի անդամներից մեկի կամ վստահված անձի պահանջի: Օրենքը արտացոլում է հանձնարարականը, սակայն այն հիմնականում չի իրականացվում:

**Ընտրական իրավունք.** Ընտրական իրավունքի հետ կապված չորս հանձնարարականներ են արվել: Դրանցից մեկը վերաբերում է մեծամասնական կարգով թեկնածուների համար զինվորականների քվեարկության թույլտվությանը, արտասահմանում բնակվող քաղաքացիների քվեարկության իրավունքին, բնտարկյալների քվեարկության իրավունքին, և երկքաղաքացիություն ունեցող անձանց քվեարկության իրավունքին: Չորս հանձնարարականներից ոչ մեկը չի իրականացվել:

**Քվեարկության արդյունքների ամփոփում.** Քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ երեք հանձնարարականներ են ներկայացվել, որոնք ուղղված են

թափանցիկության, արդյունավետության և հետևողականության ապահովմանը: Երեք հանձնարարականներն էլ իրականացվել են, սակայն դրանցից մեկն է եղել արդյունավետ:

**Վարչական ռեսուրսների օգտագործում.** Վարչական ռեսուրսների օգտագործման հետ կապված տրվել է 14 հանձնարարական, որոնք վերաբերում են կուսակցության և պետության տարանջատմանը, քարոզչության և ի պաշտոնե իրականացվող պարտականությունների բաժանմանը, քարոզչության նպատակով տեղական և կենտրոնական իշխանության ռեսուրսների ազնիվ օգտագործմանը: 14 հանձնարարականներից երեքը անարդյունավետորեն իրականացվել են:

**Ընտրակաշառք.** Ընտրակաշառքի վերաբերյալ ներկայացվել են չորս հանձնարարական, որոնցից են՝ ընտրակաշառքի քրեականացումը և կանխման մեխանիզմների մշակումը: Երկու հանձնարարականն իրականացվել են, սակայն անարդյունավետ:

**Ընտրողների իրազեկում.** Առաջարկվել է իրականացնել ընտրողների շարունակական իրազեկում: Հանձնարարականը իրականացվել է, սակայն ոչ արդյունավետ:

**Ընտրացուցակ.** Ընտրացուցակների վերաբերյալ ներկայացվել են 11 հանձնարարականներ, որոնցից են ընտրագանգվածների սահմանումը, էլեկտրոնային ընտրացուցակների օգտագործումը և դրանց ճշգրտման համար համապատասխան մեխանիզմի ստեղծումը: Հանձնարարականներից վեցն իրականացվել են, սակայն երկուսն են արդյունավետ եղել:

**Քվեարկության գործընթացը.** Քվեարկության գործընթացին առնչվող տասներկու հանձնարարական է արվել, այդ թվում՝ առաջարկվել է ապահովել քվեաթերթիկի անվտանգությունը, թանաքապատել ընտրողների մատները, նշագրել քվեաթերթիկները, մշակել այլ անձի օգնությամբ քվարկության և բազմակի քվեարկության կանխարգելման մեխանիզմներ: Բազմակի քվեարկության խնդիրը և այլ ընթացակարգային հարցեր շարունակական բնույթ են կրում. իշխանությունները որոշել են նշագրել անձնագրերը, չնայած, որ վերջին բոլոր ընտրությունների ժամանակ օգտագործվող թանաքը անմիջապես ցնդում էր:

12 հանձնարարականներից տասնմեկը իրականացվել են, սակայն դրանցից միայն վեցն են արդյունավետ եղել:

**Ձևակերպում.** Օրենսդրական ձևակերպման առումով, մեկ ձևաբանական անհամապատասխանություն է հայտնաբերվել: Հանձնարարականը չի իրագործվել, սակայն այլևս արդիական չէ, քանի որ վերաբերում էր հին ընտրական օրենսգրքին:

Աղյուսակ 1: Հանձնարարականների ամփոփում

	Թեմատիկա	Ընդհանուր	2003 Ն	2003 Խ	2007	2008	2012	2013	Ընդհանուր կրկնություններով	Կոնկրետ	Էսկան	Իրականացված	Արդյունավետ	Կրկնվող
1	Մատչելիություն	4	2	2	0	1	1	2	8	4	4	1	1	4
2	Ընտրական վեճերի լուծում	26	9	8	7	11	5	6	46	26	23	15	13	11
3	Վարչական կալանք	1	1	1	0	0	0	0	2	1	1	1	1	1
4	Քարոզարշավի ֆինանսավորում	7	0	2	2	3	3	1	11	7	6	4	0	4
5	Թեկնածուների գրանցում	16	9	14	1	0	1	2	27	16	14	11	8	9
6	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	7	4	3	1	1	2	2	13	7	7	7	3	6
7	Քաղաքացիական դիտորդներ	4	1	1	1	0	1	2	6	4	3	1	1	2
8	Նախընտրական քարոզարշավ	5	0	0	1	0	3	1	5	5	5	1	1	0
9	Ընտրական հանձնաժողովներ	18	12	12	3	2	1	1	31	18	18	10	1	11
10	Ընտրական գործընթացների արդարություն օրինավորություն	7	1	2	0	3	4	2	12	7	7	0	0	3
11	Հանձնարարականների իրականացում	2	0	0	1	0	0	2	3	2	2	0	0	1
12	Սահմանադրական դատարանի որոշումների իրականացում և օրենսդրական համապատասխանություն	2	1	1	1	0	0	0	3	2	2	0	0	1
13	Լրատվամիջոցներ	24	7	7	11	9	5	2	41	24	23	7	1	13
14	Չինված ուժեր	2	1	1	0	1	0	0	3	2	2	1	0	1
15	Մասնակցություն	1	0	0	1	0	0	0	1	1	0	1	0	0
16	Կանանց մասնակցություն	3	0	1	1	0	2	0	4	3	3	1	0	1
17	Ոստիկանություն	2	2	2	0	2	0	2	8	2	2	1	0	1
18	Տեղամասային կենտրոններ	3	1	2	0	0	1	2	6	3	3	3	1	2
19	Խախտումների կանխարգելում	1	1	1	0	0	0	0	2	0	1	0	0	1
20	Վստահված անձինք	2	0	0	0	1	0	1	2	2	2	1	1	0
21	Արդյունքների հրապարակում	5	3	3	4	1	0	0	11	5	5	5	0	3
22	Խախտումների արձանագրում	1	1	1	0	0	0	0	2	1	1	1	0	1
23	Ընտրական իրավունք	4	1	2	0	1	2	1	7	4	3	0	0	3
24	Քվեարկության արդյունքների ամփոփում	3	0	1	2	1	0	0	4	1	1	3	1	0
25	Վարչական ռեսուրսների օգտագործում	14	3	3	2	6	5	7	26	14	14	3	0	8
26	Ընտրակաշառք	4	0	0	1	2	1	0	4	4	4	2	0	0
27	Ընտրողների իրազեկում	1	1	1	1	0	0	1	4	1	1	1	0	1
28	Ընտրացուցակներ	11	6	7	4	1	3	2	23	11	11	6	2	8
29	Քվեարկության գործընթաց	12	5	5	6	2	0	1	19	12	12	11	6	5
30	Ձևակերպում	1	1	1	0	0	0	0	2	1	0	0	0	1
	ԸՆԴԻԱՆՈՒՐ	193	73	84	51	48	40	40	336	190	180	98	41	102

## Եզրակացություն և առաջարկություններ

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները (ԸՄԴԱ) Հայաստանյան ընտրությունները դիտարկում են 1996 թվականից ի վեր, և այս առաքելությունների աջակցությամբ ընտրական օրենսդրությունը և ընտրությունների կազմակերպումը Էականորեն բարելավվել են:

Ընտրական օրենսդրությունում վերջին տարիներին կատարված փոփոխությունները նշանակալիորեն բարելավեցին ընտրությունների վարչարարության որակը, սակայն գուճահեռաբար օրենքի շրջանցման ավելի հղկված մեթոդներ մշակվեցին:

Նոր ընտրական օրենսգրքի նախագծման փուլում ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից ներկայացված որոշ հանձնարարականներ հաշվի են առնվել, սակայն որոշ հանձնարարականներ պատշաճ չեն ընդգրկվել, ներառյալ՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց ընտրելու իրավունքի հնարավորության սահմանումը, ընտրատեղամասերում ընտրողների թվի նվազեցումը, նվիրատվությունների թափանցիկության ապահովումը, ինչպես նաև ԿԸՀ-ի և ԸԸՀ-ների կողմից խախտումների վերաբերյալ իրավապահ մարմիններին տեղեկացնելու պարտավորության սահմանումը: Այն հանգամանքը, որ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի, ԵԽԽՎ-ի և Եվրոպական խորհրդարանի ներկայացուցիչներից կազմված համատեղ Միջազգային դիտորդական առաքելության՝ վերջին նախագահական ընտրությունների վերաբերյալ կատարած նախնական համատեղ հայտարարությունը հանրության կողմից հավանության չարժանացավ, վկայում է այն մասին, որ հայ հասարակությունը միջազգային հանրությունից ակնկալում է Հայաստանի իշխանությունների նկատմամբ ավելի մեծ հետևողականություն՝ ապահովելու, որ ընտրական բարեփոխումները ձևական բնույթ չկրեն, ինչպես նաև ԸՄԴԱ-ները շարունակաբար հետևեն իրենց կողմից ներկայացված հանձնարարականների կատարմանը: 2017թ.-ի խորհրդարանական ընտրություններին ընդամաք պետք է երաշխքներ ստեղծվեն համատարած և շարունակական ընտրակաշառքների, ընտրողների նկատմամբ ճնշումների, վարչական ռեսուրսների չարաշահման և ընտրախախտումների անպատժելիության դեմ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի առաջարկությունները ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություններին

- Խորությամբ վերլուծել ընտրակեղծիքների սխեմաները, որպեսզի դրանց դեմ պայքարի համար ավելի արդյունավետ հանձնարարականներ ներկայացվեն
- Ձևաագովել, որ ընտրություններից հետո հրապարակվեն ընտրողների կողմից ստորագրված ցուցակները
- Հանձնարարականների մշակման փուլում շարունակաբար և սերտ համագործակցել տեղական դիտորդների հետ
- Ձևաագովել, որ ԿԸՀ-ն ավելի նախաձեռնող և ակտիվ դեր ստանձնի իրեն ներկայացվող փաստաթղթերի ստուգման գործում:
- Ելնելով ՀՀ-ում ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի հանձնարարականների իրականացման վերլուծության ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գնահատականից՝ կազմել չկատարված կամ արդյունավետորեն չկատարված հանձնարարականների ցուցակ և ՀՀ իշխանությունների հետ համատեղ կազմել դրանց իրականացման նպատակով

Առաջարկություններ ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին

